



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ուչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

~~34~~

~~1172~~

1 MAR 2010

Լ Ե Ն Ի Ն Ի



ՊԱՏԳԱՄՆԵՐԸ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

II հրատարակություն

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1931

37
4-98

ժժ
173
ժժ
1015

ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ

Ժողովրդական Լոխավորո՞թցան ՄԱՍԻՆ

Կազմեց
Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ

Յեկրոդ հրատարակություն

ԶՄ ԺՈՂՈՎՈՐԴՆ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՍԿՎԱ 1931

27 FEB 2014

37
4-98

44.568

Дубликатный фонд
госуд. библиотеки СССР
им. В. И. Ленина



4642 84

Главлит А-85341 Заказ № 2056 Тираж 5000 экз.
Книжная ф-ка Центриздата Народов СССР, Москва,
Шлюзовая набережная, 10.

Այն որից, յերբ պրոլետարիատը իշխանության գլուխ
անցավ, Լենինը շատ և դրել ու խոսել Ժողովրդական լուսա-
վորության գործի մասին, և այժմ երեսը և ուշադրությամբ
խորանուգլխել նրա բոլոր ասածների մեջ ու ստուգել, թե
արդյո՞ք իրագործված և այն բոլորը, ինչ նա սահանջում
էր, իսկ յեթև իրագործված և, արդյո՞ք այնպես, ինչպես նա
յեր ցանկանում, տեսնել, թե ի՞նչ բան դեռևս չի արված
և ի՞նչ բան դուրս պետք և վերափոխել:

ն. Կ.

1918 թ. օգոստոսի 20-ին, ժողովրդական լուսավորության Համառուսական առաջին համագումարում իր արտահանած ճառում Լենինն ասում է՝

«Այժմ ամբողջ հողը, ֆաբրիկաներն ու գործարանները հանձնված են բանվորներին և գյուղացիներին: Բանվորներն այժմ կանչված են վոչ միայն դադարահան կանգնելու և խուփի յետևից՝ դնալու, այլև կառավարելու կալվածքներն ու արտադրության միջոցները — ֆաբրիկաներն ու գործարանները: Յե՛վ չափ լնական և այն ճգնաժամը դեպի զխուսթյունը, վոր այժմ արթնացել է բանվորների մեջ: Բանվորները ձգտում են դեպի զխուսթյունն ու զպրոց, և այժմ մեր նպատակն է՝ նրանց տալ այդ զխուսթյունն ու զպրոցը:

Վոմանը մեզ կշտամբում են նրանում, վոր մենք զպրոցը դարձնում ենք դասակարգային: Բայց զպրոցը հենց այդպես է յեղել իր ամբողջ գոյության ընթացքում: Յեթե մենք այժմ բարձր աստիճանի զպրոցների ուսուցիչներին կողմից սարտաժ ենք տեսնում, — դա միայն ցույց է տալիս, վոր այդ ուսուցիչները ցանկանում են մեր զպրոցները մոնոպոլիզացիայի յենթարկել, դրանք դարձնել դասակարգային կոլի գործիք, դրանցից շինել զենք՝ բանվորների ու գյուղացիների դեմ ուղղելու համար: Յե՛վ խեղապես ինչն է պատճառը թեկուզ այն՝ հինգերորդ տարին շարունակվող սպանդանոցի՝ սպառճառն այն է, վոր զպրոցն իր նպատակների համար ոգտադործել եր աշխատավոր ժողովրդի թշնամին: Հին տիպի զպրոցում յերեխաները անխուսափելիորեն ներշնչվում են ազգային նախապաշարմունքներով, նրանց մեջ բորբոքում են ատելություն դեպի ուրիշ ազգեր, դեպի ուրիշ ազգի բանվորներ: Մասադ միտքը մթազնվում է հի-

մաք նախապաշարմունքներով: Բուրժուական յերկրներում զպրոցները հազեցած են ստով, զրպարտությունով՝ ի հաճույս բուրժուադիայի: Ատելության զգացմունքը դեպի առանձին ազգություններ՝ բուրժուադիան հրաշալի կերպով ոգտադործում է իր նպատակների համար հատկապես պատերազմի ժամանակ. իսկ այդ պատերազմը հակապական հանույթ է տալիս նրան:

Վերջենք թեկուզ մեր ժամանակը:

Այժմ մեզ մոտ կան հաղարավոր միլիոներներ, վորոնք բուսել են պատերազմի ժամանակ, ինչպես սունկերը առատ անձրևից հետո: Նրանց պետք է պատերազմ, վորպեսզի հարստանան, ուստի և նրանք, առանց յերկար մտածելու, զպրոցն ևս կոգտադործելին իրենց դուռ իմպերիալիստական նպատակների համար: Բայց մենք չպետք է թույլ տանք մինչ այդ, աստիճան: Մենք ասում ենք, վոր մեր զպրոցն ևս դասակարգային կլինի, սակայն ազգաբնակչության բացառապես աշխատավորական խավերի շահերը հետադուր:

Անհրաժեշտ է, վոր դրժ զենք մեր բոլոր ուժերը, յեռանդը և զխուսթյունը, վորպեսզի ըստ կարելույն շուտով կառուցվի մեր ապագա աշխատանքային զպրոցի շենքը, վոր հետագայում միայնակ կաբող կլինի մեզ պաշտպանել համաշխարհային ամեն տեսակ բաղխումներից ու սպանդանոցներից, վորպիսին ահա հինգերորդ տարին է, ինչ շարունակվում է» (Հ. XV, էջ 417):

Մենք տեսնում ենք, թե նա ինչ հակապական նշանակություն է տալիս զպրոցին:

Այդ այն իդեյան է, վոր նա հայտնում է դեռ 1913 թվին, «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» հոդվածում. անհրաժեշտ է, «վոր զպրոցում նախապատրաստվի այն, ինչ վոր կյանքում իրադործվում է»:

1919 թ. մարտ ամսին, Ռ. Կ. Կ. VIII համագումարում ընդունվեց Կուսակցության նոր ծրագիրը: Դրա այն մասը, ուր խոսվում է ժողովրդական լուսավորության բնագավառում կոմունիստների անելիքների մասին, մշակված է Լենինի անմիջական ղեկավարությամբ: Այդ մասում ասվում է. «Ժողովրդական լուսավորության բնագավառում Ռ. Կ. Կ.

իրեն նպատակ է դնում 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից սկսված գործն հասցնել իր վախճանին—դպրոցը բուրժուազիայի դասակարգային տիրապետության գործիքից դարձնել գործիք՝ միանգամայն վոչնչացնելու հասարակության բաժանումը դասակարգերի, դպրոցը դարձնել գործիք՝ հասարակության կոմունիստական վերածնունդի:

Պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում, այսինքն՝ կոմունիզմի լրիվ իրականացումը հնարավոր դարձնող պայմանների նախապատրաստության շրջանում, դպրոցն ընդհանրապես պետք է լինի վոչ միայն կոմունիզմի սկզբունքների հաղորդիչը, այլև պրոլետարիատի իդեյական, կադմակերպչական, դաստիարակչական աղբյուրության հաղորդիչը աշխատավոր մասնանների կիսապրոլետարական և վոչ պրոլետարական խավերի նկատմամբ, նպատակ ունենալով կրթելու այնպիսի սերունդ, վորն ընդունակ լինի վերջնականապես սահմանել կոմունիզմ: Այդ ճանապարհի վրա ներկայումս մեր մերձավոր նպատակն է հանդիսանում շարունակել զարգացնել այն հիմունքները, վոր Խորհրդային իշխանությունն արդեն սահմանել է դպրոցական և լուսավորության գործի համար:

1) Անցկացնել ձրի և պարտադիր ընդհանուր ու պոլիտեխնիկական (արտադրության գլխավոր ճյուղերի հետ թեորիայում և պրակտիկայում ծանոթացնող) կրթություն՝ յերկու սեռի մինչև 17 տարեկան բոլոր յերեխաների համար:

2) Ստեղծել նախադպրոցական հիմնարկների ցանց — մսուրներ, մանկապոռներ, մանկապարտեզներ և այլն, նպատակ դնելով բարելավել հասարակական դաստիարակությունը և կնոջ ազատագրումը:

3) Դասավանդությունը տանելով մայրենի լեզվով, յերկու սեռի յերեխաներին սոյորենցնելով միասին, լրիվին իրադրծել սկզբունքներն աշխատանքային, անպայման աշխարհիկ դպրոցի, այսինքն՝ կրոնական ամեն տեսակի աղբյուրությունից ազատ դպրոցի, վորը պետք է ուսուցումը սերտ կապի հասարակական-արտադրողական աշխատանքի հետ, կոմունիստական հասարակության բաղմակողմանի զարգացած տնտեսության պատրաստի:

4) Բալոր սովորողներին պետության հաշվին հայթայթել սնունդ, հագուստ, մոտնաման և դասական պիտույքներ:

5) Պատրաստել լուսավորության աշխատավորների նոր այնպիսի կադրեր, վորոնք համակված լինեն կոմունիզմի իդեյաներով:

6) Աշխատավոր բնակչությունը գործի մեջ քաշել, նրան ապահով մասնակցող դարձնել լուսավորության գործին («Ժողովրդական լուսավորության խորհուրդները» զարգացնել, դրադեաներին մոբիլիզացիա անել և այլն):

7) Բանավորների ու գյուղացիների ինքնակրթության և ինքնազարգացման գործին ցույց տալ պետական բաղմակողմանի ոգնություն (ստեղծել արտադրողական կրթության հիմնարկների ցանց — դրողարաններ, չափահասների համար դպրոցներ, ժողովրդական տներ և համալսարաններ, դասընթացներ, դասախոսություններ, կինեմատոգրաֆներ, ստուդիաներ և այլն):

8) 17 տարեկանից մեծերի համար լայն զարգացնել պոլիտեխնիկալ կրթությունը՝ կապելով այդ ընդհանուր պոլիտեխնիկական գիտելիքների հետ:

9) Բարձրագույն դպրոցի աուդիտորիաները ընդունվելու լայն հնարավորություն տալ բոլոր սովորել ցանկացողներին, առաջին հերթին բանվորներին, բարձրագույն դպրոցում դասախոսական աշխատանքի կոչելով բոլոր նրանց, վորոնք կարող են այնտեղ սովորեցնել. վերացնել բոլոր և ամեն տեսակի արվեստական խոչընդոտները դիտական թարմ ուժերի և կաֆեդրայի միջև. սովորողներին նյութապես ապահովել՝ պրոլետարներին և գյուղացիներին բարձրագույն դպրոցից ոգտվելու փաստական հնարավորություն տալու նպատակով:

10) Նույնպես և անհրաժեշտ է բաց անել ու աշխատավորության համար մատչելի դարձնել արվեստի բոլոր գանձերը, վորոնք ստեղծված են նրանց աշխատանքի շահագործման հիման վրա և մինչև որս դտնվում են բացառապես շահագործողների տրամադրության տակ:

11) Ամենալայն չափով զարգացնել կոմունիստական իդեյաների պրոպագանդը, դրա համար ոգտագործելով պե-

տական իշխանության ապարստոն ու միջոցները» : (Հ. XVI, էջ 481—482) :

Ռ. Կ. Կ. VIII Համադոմարի ռեզոլյուցիայի մեջ (քաղաքական պրոպագանդի և կուլտուրական-լուսավորական աշխատանքի մասին), վոր Լենինը գրել է գլուղում, ասվում է. «Իսկ ինչ վերաբերում է դպրոցին, ապա նրա վերանորոգման հարցը, միասնության և աշխատանքի հիմունքների վրա, սկզբունքով արդեն վճռված է» :

Ընդունված ծրագրի առթիվ Լենինը 1921 թ. փետր. 7 թվակիր հոգվածում գրում է. «1920 թ. դեկտեմբերին կայացավ կոմունիստական խորհրդակցություն՝ ժողովրդական կրթության հարցերի մասին : Մասնակցում էին 134 պատգամավոր վճռական ձայնով և 29 — խորհրդակցական ձայնով : Խորհրդակցեցին 5 որ : Այդ խորհրդակցության հաշվետվությունը տրված է Խորհուրդների 8-րդ Համադոմարի «Բյուլետենի հավելվածում», վոր նվիրված է ժողովրդական կրթության հարցերի համար գումարված կուսակցական խորհրդակցությանը (հրատարակություն Համառուս. Կենտր. Գործ. Կոմ., 1921 թ. հունվ. 10) : Խորհրդակցության ռեզոլյուցիաներից, նրա մասին տված հաշվետվությունից, վերև հիշած «Բյուլետենին» կցված հավելվածում ղեկավարված հոգվածներից, բացի ընկ. Լուսնաչարսկու ներածական հոգվածից և ընկ. Գրինկոյի հոգվածից — յերևում է հարցի սխալ դրումը պոլիտեխնիկական կրթության մասին, յերևում է ընդհանուր դատողություններով և արատրակտ լողունգներով «տարվելու» այն թերությունը վորի դեմ կռվելու վրա Կ. Կ. դիրեկտիվները, Ժողկոմի և Կուլլեգիայի «գլխավոր ուղղություն» են հրավիրում :

Պոլիտեխնիկական կրթության հարցը իր հիմնական գծերով վճռված է մեր կուսակց. ծրագրի այն մասում (§§ 1 և 8), վոր նվիրված է ժողովրդական լուսավորությանը : Կ. Կ. դիրեկտիվը մասնանշում է այդ կետերը. — § 1 խոսում է պոլիտեխնիկական կրթության մասին՝ մինչև 17 տարեկանների համար, § 8՝ տասնյոթ և ավելի բարձր տարիք ունեցողների համար պրոֆեսիոնալ կրթության լայն դար-

ձացում, այդ կրթությունը կապելով ընդհանուր պոլիտեխնիկական դիտելիքների հետ :

Այդպիսով, Կուսակցության ծրագրերը հարցը միանգամայն պարզ է դնում : Դատողություններն այն մասին, — «պոլիտեխնիկական քե՞ մոնոտեխնիկական կրթություն» (հենց այդ՝ իմ կողմից չափերտներ է մեջ առված և իմ կողմից ընդգծած բառերն, իրենց ամբողջ հրեշային անմտությունով, մենք գտնում ենք վերոհիշյալ «Բյուլետենի» հավելվածի 4-րդ յերեսում), — այդ դատողությունները հիմնովին սխալ են, կոմունիստի համար ուղղակի անթույլատրելի — դրանք ցույց են տալիս և ծրագրի չդիտենալը և արատրակտ լողունգներով դատարկ կերպով «տարվելը» : Յեթե մենք ստիպված ենք (ընդհանուր պոլիտեխնիկականից դեպի պրոֆեսիոնալ — պոլիտեխնիկական կրթության անցնելու համար) տարիքը 17-ից ժամանակավորապես իջեցնել մինչև 15, ապա Կուսակցությունը տարիքի չափի այդ իջեցումը պետք է դիտի «բացառապես» (Կ. Կ. դիրեկտիվ, կետ 1-ին) վորպես գործնական անհրաժեշտություն, վորպես ժամանակավոր միջոց, վոր բղխում է «յերկրի աղքատությունից և քայքայումից» :

Յերկունքով արված ընդհանուր դատողությունները «հիմնավորելու» նման իջեցումը իրենից ներկայացնում է սոսկ անհեթեթությունը : Պետք է բավական համարել խաղալ այդ ընդհանուր դատողություններով և իբր թե «տեսականացում»-ով : Աշխատանքի ամբողջ ծանրությունը պետք է փոխադրվի «պրակտիկ փորձի հաշվառման և ստուգման» գործի մեջ՝ «այդ փորձի ցուցմունքները սխալմամբար ոգտադործելու» գործի մեջ» : (Հ. XVIII, մ. I, էջ 73) :

Իր նշանավոր ճառում, վոր արտասանել է Ռ. Կոմ. Յերիտ. Միություն՝ Համառուսական VIII Համադոմարում (1920 թ. հոկտ. 4), Լենինը պայծառ լույս է սփռում այն բանի վրա, թե ինչպես պետք էլինի դպրոցը խորհրդային հանրակարգում. — «Յեվ ահա, այս տեսակետից մոտենալով յերիտասարդության անելիքների հարցին, յես պետք է ասեմ, վոր ընդհանրապես յերիտասարդության այդ անելիքներն, և մասնավորապես Կոմյերիտիության և ամեն

տեսակ ալ կողմակերպութեաններէ տնելիքները կարելի
կլինեն արտահայտել մեկ խոսքով — խնդիրը կայանում է
նրանում, վոր ուսանեմք:

Հասկանալի յե, վոր այդ միայն «մեկ խոսք» է: Դա
դեռևս արտասխան չի տալիս, դիտարկելու և ամենաեղանակաւ
հարցերին, թե ինչ պետք է ուսանել և ինչպէս ուսանել:
Յեւ ներկա դեպքում ամբողջ խնդիրն այն է, վոր կերպարա-
նախօրհանով հին կապիտալիստական հասարակութիւնը,
մենք չենք կարող հին դրութեան մեջ թողնել այն նոր սե-
րունդներին ուսումը, դաստիարակութիւնը և կրթութիւնը,
վորոնք պետք է կոմունիստական հասարակութիւն ստեղ-
ծեն: Յերիտասարդութեան ուսման, դաստիարակութեան և
կրթութեան համար պետք է յեղակեալ ընդունել այն տվյալ-
ները, վոր թողել է մեզ հին հասարակութիւնը:

Մենք կարող ենք կոմունիզմ ստեղծել միմիայն դիտելիք-
ների, կաղմակերպութիւնների և հիմնարկութիւնների
այն ընդհանուր դումարից, մարդկային ուժերի և միջոց-
ների այն պաշարով, վոր մեզ թողել է հին հասարակու-
թիւնը: Միայն արմատապէս փոխելով յերիտասարդութեան
ուսման դրոշմը, կաղմակերպութիւնը և դաստիարակու-
թիւնը, մենք կարող ենք հասնել այն բանին, վոր յերի-
տասարդ սերնդի ջանքերի հետեանքով ստեղծվի այնպիսի
հասարակութիւն, վորը նման չլինի հին, այսինքն՝
ստեղծվի կոմունիստական հասարակութիւն:

Ուստի և մենք պետք է մանրամասնորեն կանգ առնենք
այն հարցի վրա, թե ինչ պետք է ուսուցանենք մեր յերիտա-
սարդութեանը և ինչպէս պետք է ուսանի այդ յերիտասար-
դութիւնը, յեթե նա, իրօք, կամենում է արդարացնել կո-
մունիստական յերիտասարդութեան անունը. մենք պետք է
կանգ առնենք և այն հարցի վրա, թե ինչպէս նախապա-
տրաստել յերիտասարդութիւնը, վորպէսզի նա կարողանա
աւարտել մեր սկսած դրոշմը:

Յեա պետք է ասեմ, վոր այս հարցի առաջին և, թվում
է թե ամենարեւական պատասխանն այն է, վոր յերիտասար-
դական միութիւնը և ընդհանրապէս ամբողջ այն յերիտա-

սարդութիւնը, վոր կամենում է կամաւորապէս հետադա-
կալարդի անցնել, պետք է ուսանի կոմունիզմը:

Բայց «ուսանել կոմունիզմ» պատասխանը չափազանց
ընդհանուր պատասխան է: Ի՞նչ է մեզ հարկավոր՝ կոմու-
նիզմն ուսանելու համար: Ի՞նչ պետք է մենք ընտրենք ընդ-
հանուր դիտելիքների դումարից, վորպէսզի կոմունիստա-
կան դիտելիք ձևով բերենք: Այս հարցում մեզ սպառնում
են մի շարք վտանգներ, վորոնք հաճախակի դրսևորվում են,
հենց վոր կոմունիզմ ուսանելու խնդիրը դրվում է սխալ
կերպով, կամ թե յերբ նա հասկացվում է չափազանց միա-
կողմանի ձևով:

Բնական է, վոր առաջին հայացքից ծագում է այն
միտքը, թե կոմունիզմ ուսանել — այդ նշանակում է յու-
րացնել դիտելիքների այն դումարը, վոր շարադրված է
կոմունիստական դասադրքերում, բրոշյուրներում և աշ-
խատութիւններում: Բայց կոմունիզմ ուսանելու այդպիսի
վորոշումը կլինի չափազանց կոպիտ և անբաւարար:

Յեթե միայն կոմունիզմի ուսումնասիրութիւնը սահմա-
նափակվի այն ամենի յուրացումով, ինչ շարադրված է
կոմունիստական աշխատութիւնների, դրքերի և բրոշյուր-
ների մեջ, ապա այդ դեպքում շատ հեշտութեամբ մենք
կստանայինք իրենց կոմունիստ հորջորջողներ կամ սնա-
պարծներ, իսկ դա բացարձակապէս մեզ փրկաւ կրքեր,
վորովհետեւ այդ մարդիկ, սովորած և կարողացած լինելով
այն ամենը, ինչ շարադրված է կոմունիստական գրքերում
և բրոշյուրներում, անկարող կլինեյին այդ բոլոր դիտելիք-
ներն իրար կապել և դործել այնպէս, ինչպէս իրօք պահան-
ջում է կոմունիզմը:

Հին կապիտալիստական հասարակութիւնից մեզ մնա-
ցած ամենամեծ չարիքներից և դժբախտութիւններից մեկն
էլ այն է, վոր գիրքը միանգամայն խզված էր կյանքի
պրակտիկայից, վորովհետեւ մենք ունեյինք այնպիսի գրքեր,
վորոնց մեջ ամեն ինչ նկարված էր ամենալավ դույններով,
մինչդեռ այդ գրքերը մեծ մասով հանդիսանում էին
ամենադարձելի և կեղծավոր մի խաբէյութիւն, վոր նկա-
րում էր մեզ կապիտալիստական հասարակութիւնը: Ուստի

վերին աստիճանի սխալ կլինի լոկ գրքերի միջոցով յուրացնել այն, ինչ ասվում է կոմունիզմի մասին գրված գրքերում:

Այժմ մեր ճառերի և հոդվածների մեջ բացակայում է այն ամենի սովորական կրկնութունը, ինչ առաջ ասվում էր կոմունիզմի մասին, վորովհետև մեր ճառերը և հոդվածները կապված են ամենորոյա և բաղմակողմանի աշխատանքի հետ:

Առանց աշխատանքի, առանց սլաքարի՝ գրքից, կոմունիստական բրոշյուրներից և յերկերից կոմունիզմին ծանոթանալը կստարեւապես վոչ մի արժեք չունի, վորովհետև դա կշարունակեր պահպանել թերութիւնը և պրակտիկայի կապի հին խզումը, այն հին խզումը, վոր հին բուրժուական հասարակութեան ամենազարչելի դիժն էր կազմում:

Ավելի վտանգավոր կլիներ, յեթե մենք սկսեյինք յուրացնել միայն կոմունիստական լոգունքներ: Եթե ժամանակին չհասկանանք այդ վտանգը և յեթե մեր ամբողջ աշխատանքը չուղղենք դեպի այդ վտանգի վերացումն, այդ դեպքում այն կես, կամ մեկ միլիոն մարդիկ, ջահել տղաներն ու աղջիկները, վորոնք կոմունիզմի այդպիսի ուսումնից հետո կսկսեն իրենք իրենց կոմունիստ անվանել, մեծ վնաս կհասցնեն կոմունիզմի գործին:

Այստեղ մեր առջև ծառանում է այն հարցը, թե ինչպես պետք է զուգորդենք այս ամենը՝ կոմունիզմ ուսուցանելու համար: Ինչ պետք է մենք վերցնենք հին դպրոցից, հին դիտութիւնից:

Հին դպրոցը հայտարարում էր, վոր նա ցանկանում է բաղմակողմանի կրթված մարդ ստեղծել: Վոր նա ուսուցանում է դիտութիւններ ընդհանուր առմամբ: Մենք դիտենք, վոր դա միանգամայն սուտ էր, քանի վոր ամբողջ հասարակութիւնը հիմնված էր դասակարգային բաժանման վրա, նրա մեջ մարդիկ բաժանված էին շահագործողների և ճնշվածների, և դրանով էլ պահպանվում էր այդ հասարակութիւնը: Բնական է, վոր ամբողջ հին դպրոցը, լիովին սնված լինելով դասակարգային, վորով, դիտելիքներ էր

ընձեռնում միայն բուրժուազիայի յերեխաներին: Նրա յուրաքանչյուր բառը կեղծված էր հոգուտ բուժուազիայի:

Այդ դպրոցներում բանվորների և դյուղացիների յերիտասարդ սերունդները վոչ այնքան կրթվում էին, վորքան բռնադատվում ի շահ նույն բուրժուազիայի: Այդ սերունդներն այնպես էին դաստիարակվում, վոր բուրժուազիայի համար ստեղծվեյին պիտանի սպասավորներ, վորոնք ընդունակ լինեյին նրան շահույթ տալու և միաժամանակ չվրդովեյին նրա հանդիստն ու անդործութիւնը: Ուստի, ժխտելով հին դպրոցը, մենք մեղ համար խնդիր դարձրինք — վերցնել նրանից միայն այն, ինչ մեղ անհրաժեշտ է՝ իսկական կոմունիստական կրթութեան հասնելու համար:

Այժմ յես անցնում եմ այն հանդիմանութիւններին և մեղադրանքներին, վոր շարունակ լսում ենք հին դպրոցի հասցեյին և վորոնք հաճախ միանգամայն սխալ մեկնաբանութեան տեղիք են տալիս:

Ասում են, թե հին դպրոցը վարժեցնող, անդիր սովորեցնող դպրոց էր: Դա ճիշտ է, բայց և այնպես պետք է կարողանալ տարբերել այն, ինչ հին դպրոցում վատ էր, և այն, ինչ մեղ ոգտակար է, և պետք է կարողանալ ընտրել նրանից այն, ինչ անհրաժեշտ է կոմունիզմի համար:

Հին դպրոցը վարժեցնող դպրոց էր, նա մարդկանց հարկադրում էր յուրացնել ահադին թվով անպետք, ավելորդ, մեռած դիտելիքներ, վորոնք զլուխ էյին ուռցնում և յերիտասարդ սերունդը չինոյնիկների ընդհանուր ռանժիրի վերածում: Բայց դուք հսկայական սխալ դործած կլինեք, յեթե փորձեք այն յեղրակացութիւնն անել, թե կարելի յէ կոմունիստ դառնալ առանց յուրացնելու այն, ինչ կուտակել է մարդկային դիտելիքը: Սխալ կլինեք կարծել, թե բայկական է յուրացնել կոմունիստական լոգունքները, կոմունիստական դիտութեան յեղրակացութիւնները, առանց յուրացնելու այն դիտելիքների գումարը, վորոնց արդիւնքը հանդիսանում է վոմունիզմը:

Թե ինչպես է կոմունիզմը ծագել մարդկային դիտելիքների գումարից — դրա որինակը հանդիսանում է մարքսիզմը:

Դուք կարգացիլ ե լսել եք այն մասին, զոր կոմունիստական թեորիան, կոմունիստական դիտությունն ստեղծել ե դրսավորապես Մարքսը ե թե ինչպես մարքսիզմի ուսմունքը դադարել ե լինել մեկի, թեկուզ XIX դարի հանճարեղ սոցիալիստի արտադրածը, թե ինչպես այդ ուսմունքն ամբողջ աշխարհում դարձել ե տասնյակ ե հարյուր միլիոնավոր պրոլետարների ուսմունքը, պրոլետարների, վորոնք կիրառում են այդ ուսմունքը կապիտալիզմի դեմ մղվող իրենց պայքարում:

Յեւ յեթե դուք առաջադրեք այսպիսի մի հարց՝ ինչո՞ւ Մարքսի ուսմունքը կարողացավ տիրել ամենահեղափոխական դասակարգի միլիոնավոր ե տասնյակ միլիոնավոր սրտերը, — դուք կարող եք մի սլափասխան ստանալ. դա տեղի ունեցավ այն պատճառով, վոր Մարքսը հենվում եր կապիտալիզմի որով ձեռք բերված դիտելիքների հաստատուն հիմքին: Ուսումնասիրելով մարդկային հասարակության զարգացման որենքները, Մարքսը հասկացավ կապիտալիզմի զարգացման անխուսափելիութունը, կապիտալիզմի, վոր տանում ե դեպի կոմունիզմ, ե, վոր դրսավորն ե, նա ապացուցեց այդ միայն կապիտալիստական հասարակության ամենաճշգրիտ, ամենամանրամասն ե ամենախոր ուսումնասիրության հիման վրա, ապացուցեց այն ամենի յուրացման ողնությամբ, ինչ տվել եր նախորդ դիտությունը:

Այն ամենը, ինչ մարդկային հասարակությունն եր ստեղծել, նա ջննադատորեն վերամշակեց, չթողնելով ե վող մի կես առանց ուղղորդության: Այն ամենը, ինչ մարդկային միտքն եր ստեղծել, նա վերամշակեց, ջննադատության յենթարկեց, ստուգելով բանվորական շարժման վրա ե արեց այն յեղրակացությունները, վոր բուրժուական չրջանակներով սահմանափակված կամ բուրժուական նախապաշարունակերով կաշկանդված մարդիկ չէին կարող անել:

Սա պետք ե նկատի ունենալ, յերբ մենք խոսում ենք, որինակ, պրոլետարական կուլտուրայի մասին: Առանց ճիշտ հասկանալու այն, վոր միայն մարդկության ումբողջ

զարգացմամբ ստեղծված կուլտուրան ձգրտապես դիտենալով, նրա վերամշակմամբ կարելի յի ստեղծել պրոլետարական կուլտուրան, — առանց այս հասկանալու, մենք չենք լուծի այդ խնդիրը:

Պրոլետարական կուլտուրան անհայտ տեղից դուրս պրծած մի բան չե վող ել իրենց պրոլետարական կուլտուրային մասնադեաներ անվանող մարդկանց հնարած: Դա բացարձակապես անհեթեթություն ե: Պրոլետարական կուլտուրան պետք ե լինի դիտելիքների այն պաշարի որին նական զարգացումը, վոր մարդկությունը մշակել ե կապիտալիստական հասարակության, կալվածատիրական ե չինովնիկական հասարակության ճնշման ներքո:

Այդ բոլոր ուղիները ե չավիղները մերձեցրել են ե մերձեցնում են ու շարունակում են մերձեցնել պրոլետարական դիկտատուրային ճիշտ այսպես, ինչպես Մարքսի մշակած քաղաքատնտեսությունը մեզ ցույց տվեց, թե ինչի պիտի հանդի մարդկային հասարակությունը, նիշեց անցումը դեպի դասակարգային պայքարը, դեպի պրոլետարական հեղափոխության սկիզբը:

Յերբ համախ է՝ յերիտասարդության ներկայացուցիչների չրջանում, է՝ նոր կրթության պաշտպանների չրջանում լսում ենք հին դպրոցի դեմ ուղղած այն հարձակումները, թե նա, դպրոցը, անդիր սովորեցնող դպրոց եր, մենք ասում ենք նրանց, վոր մենք պետք ե վերցնենք այն լավը, ինչ ունեւ հին դպրոցը:

Մենք հին դպրոցից չպետք ե վերցնենք այն, ինչ յերիտասարդի հիշողությունը ծանրաբեռնում եր դիտելիքների անչափ քանակով, դիտելիքներ, վորոնք ինչը տասներորդականով անպետք էին ե մի տասներորդով խեղաթյուրված, բայց դա չի նշանակում, թե մենք կարող ենք սահմանափակվել կոմունիստական յեղրակացություններով ե սերտել միայն կոմունիստական լողուններ: Դրանով կոմունիզմ չի ստեղծվի: Կոմունիստ կարելի յի դառնալ միայն այն ժամանակ, յերբ հիշողությունդ կհարստացնես մարդկության մշակած բոլոր հարստությունների դիտեցումով:

Մեղ հարկավոր չեն անդիր անելը, բայց մեղ հարկավոր
է յուրաքանչյուր ուսողի հիշողութիւնը դարգացնել և
կատարելագործել հիմնական վաստերի գիտեցումով, վո-
րովհետեւ կոմունիզմը դատարկութիւն կը դառնա, դատարկ
մի ցուցանակ կը դառնա և կոմունիստը կլինի միայն սովորա-
կան մի անպարծ, յեթե նրա գիտակցութեան մեջ չեն վե-
րամշակվի բոլոր ստացված գիտելիքները: Դուք պետք է
վոչ միայն յուրացնեք այդ գիտելիքները, այլև այնպես
յուրացնեք, վոր նրանց քննադատորեն վերաբերվենք, վոր-
պեսդի չծանրաբեռնեք ձեր միտքը այն անպետք բանով, ինչ
հարկավոր չէ, այլ հարստացնեք այն բոլոր վաստերի գի-
տեցումով, առանց վորոնց ժամանակակից կրթված մարդ
գոյութիւն ունենալ չի կարող:

Յեթե կոմունիստը մտածէր ստացած պատրաստի յե-
ղբակացութիւնները հիման վրա պարծենալ կոմունիզմով,
չկատարելով լուրջ, դժվարին և մեծ աշխատանք, չքն-
նելով այն վաստերը, վորոնց նա պարտավոր է քննադա-
տորեն վերաբերվել, այդպիսի կոմունիստը շատ թշվառ
կլինէր, այդպես վերելից նայելը կատարելապես կործանիչ
կլինէր: Յեթե յես գիտեմ, վոր քիչ բան գիտեմ, այնպես
կանեմ, վոր ավելի շատ գիտենամ, բայց յեթե մեկը
կասի, թե նա կոմունիստ է և կարիք չունի վոչ մի բան
հաստատ գիտենալու, ապա նրանից կոմունիստի նման և
վոչ մի բան դուրս չի դա:

Հին դպրոցը պատրաստում էր կապիտալիստների ան-
հրաժեշտ սպասավորներ. հին դպրոցը գիտութեան մարդ-
կանց դարձնում էր այնպիսի մարդիկ, վորոնք պետք է
գրեյին և խոսեյին այնպես, ինչպես հաճելի յեր կապիտա-
լիստներին: Այդ նշանակում է, վոր մենք պետք է
հին դպրոցը վերացնենք: Բայց յեթե մենք պետք է այդ
վերացնենք, յեթե մենք պետք է այդ խորտակենք, արդ-
յո՞ք դա նշանակում է, վոր մենք չպետք է նրանից վեր-
ցնենք այն ամենը, ինչ իրեւ անհրաժեշտութիւն կուտա-
կել է մարդկութիւնը:

Արդյո՞ք ուս նշանակում է, վոր մենք չպետք է կարո-
ղանք տարբերել այն, ինչ անհրաժեշտ էր կապիտա-
լիզմին, և այն, ինչ անհրաժեշտ է կոմունիզմին:

Այն հին վարժեցման տեղը, վոր, հակառակ մեծամաս-
նութեան կամքի, կիրառվում էր բուրժուական հասարա-
կութեան մեջ, մենք դնում ենք բանվորների և դյուղացի-
ների գիտակցական դիպիսիւնան, վորոնք զեպի հին հա-
սարակութիւնը տածած իրենց ատելութեանը միացնում են
վճռականութիւն, կարողութիւն և պատրաստականու-
թիւն՝ համախմբելու և կաղնակերպելու ուժերն այդ պայ-
քարի համար, վորպեսդի ջլտոված, բաժանված հակայա-
կան յերկրի ամբողջ տարածութեան վրա ցրված միլիոն-
ներից և հարյուրավոր միլիոններից ստեղծվի միասնական
կամք, քանի վոր առանց այդ միասնական կամքի մենք
անխուսափելիորեն ջարդված կլինենք: Առանց այդ միա-
բանութեան, առանց բանվորների և դյուղացիների գի-
տակցական դիպիսիւնայի մեր դործն անհուսալի յէ:
Առանց դրան ամբողջ աշխարհի կապիտալիստներին և
կարխմատներին մենք հաղթել չենք կարող: Մենք նույն-
իսկ չենք ամբաջնի հիմքը, չխոսելով այն մասին, թե այդ
հիմքի վրա կարող ենք նոր կոմունիստական հասարակու-
թիւն կառուցել:

Նույնպես և ժխտելով հին դպրոցը, միանգամայն որի-
նական և անհրաժեշտ ատելութիւն տածելով զեպի այդ
հին դպրոցը, դնահատելով հին դպրոցը քայքայելու պա-
տրաստականութիւնը, մենք պետք է հասկանանք, վոր
հին վարժեցման, անդիր սովորեցնելու տեղը մենք պետք
է դնենք մաքրված զիտելիքների ամբողջ դումարն ընդ-
գրկելու կարողութիւնը, և ընդգրկելու այնպես, վոր
կոմունիզմը մի ինչ վոր սերտած բան չդառնա, այլ ձեր
կողմից մտածված լինի և հանդիսանա այն յեղբակացու-
թիւնները, վոր անխուսափելի յեն արդի կրթութեան տե-
սակետից:

Ահա այնպես պետք է դնել հիմքային խնդիրները, յեր
մենք խոսում ենք կոմունիզմը ուսանելու հարցի մասին:
(4. XVII, էջ 314—319):

Նույն ճառում, այնուհետև, Լենինը շարունակում է. «Իսկ մեր դպրոցը յերկտասարդությանը պետք է ուսուցիչության հիմունքները, պետք է նրանց ընդունակ դարձնի մշակելու կոմունիստական հայացքներ, յերկտասարդներից պետք է կրթված մարդիկ պատրաստի: Դպրոցը, այն ժամանակի ընթացքում, քանի մարդիկ նրանում ուսանում են, նրանց պետք է դարձնի շահագործողներից ազատագրվելու համար մղվող պայքարի մասնակիցներ» (հ. XVII, էջ 325):

«Յեա պատասխանեցի այն հարցերին, թե ինչ պետք է ուսանենք, ինչ պետք է վերցնենք հին դպրոցից, հին գիտությունից: Յեա կախատեմ պատասխանել և այն հարցին, թե ինչպես պետք է այդ ուսանել: — Միայն՝ դպրոցական դործնելության ամեն մի քայլը, կրթության և ուսման ամեն մի քայլը անխղճ կերպով շահկապելով բոլոր աշխատավորների՝ շահագործողների դեմ մղվող պայքարի հետ» (Նույն տեղը, էջ 326):

«Յերկտասարդական միության անդամ լինել — նշանակում է իր աշխատանքը, իր ուժերը ընդհանուր դործին նվիրել: Ահա դրա մեջ է կայանում կոմունիստական դաստիարակությունը: Միայն այդպիսի աշխատանքով յերկտասարդ տղան կամ աղջիկն իսկական կոմունիստ կդառնան: Նրանք կոմունիստներ կդառնան միայն այն դեպքում, յեթե նրանք այդ աշխատանքով կարող կլինեն դործնական առողջություններ ձեռք բերել» (Նույն տեղը, էջ 327):

«Մեր դաստիարակությունը պետք է միացնել աշխատավորների՝ շահագործողների դեմ մղվող պայքարին, վորպեսզի ողնել առաջիններին լուծելու կոմունիզմի ուսմունքից բղիթող խնդիրները» (Նույն տեղը, էջ 327):

Մենք ցանկանում ենք Ռուսաստանը աղքատ և թշվառ յերկրից հարուստ յերկիր դարձնել: Յեվ անհրաժեշտ է, վոր յերկտասարդության կոմունիստական միությունն իր կրթությունը, իր ուսումը և իր դաստիարակությունը միացնի բանվորների և դյուղացիների աշխատանքի հետ, վորպեսզի նա չպարփակվի դպրոցներում և չսահմանափակվի լոկ կոմունիստական դրժեր և բրոշյուրներ կարդալով:

Միայն բանվորների և դյուղացիների հետ միասին աշխատելով կարելի չէ իսկական կոմունիստ դառնալ:

Յեվ անհրաժեշտ է, վորպեսզի բոլորը տեսնեն, վոր յերկտասարդության միության մեջ մտնողը դրադեա է ու նաև կարող է աշխատել: Յերբ բոլորը կտեսնեն, թե ինչպես մենք հին դպրոցից վանեցինք մուշտրան, այդ փոխարինելով գիտակցական դիսցիպլինայով, թե ինչպես յուրաքանչյուր յերկտասարդ մասնակցում է շարաթորյակին, թե ինչպես նրանք ողտադործում են ամեն մի քաղաքի մոտ դառնվող տնտեսություն՝ աղգարնակությունը ոգնելու համար, ժողովուրդը կսկսի նայել աշխատանքին վոր այնպես, ինչպես առաջ էլին նայում» (Նույն տեղը, էջ 328):

«Պետք է ուսման վորջ խնդիրներն այնպես դնել, վոր յուրաքանչյուր որ ամեն մի դյուղում և քաղաքում յերկտասարդությունը դործնականորեն լուծի ընդհանուր աշխատանքի այս կամ այն խնդիրը, թեկուզ ամենափոքրիկ, ամենահասարակ խնդիրը:

Այն չափով, ինչ չափով վոր այդ կիրադործվի յուրաքանչյուր դյուղում, ինչ չափով վոր կղարդանա կոմունիստական մրցությունը և յերկտասարդությունը կապացուցի, վոր նա կարող է միահամուռ աշխատանք տանել, այդ չափով էլ ապահովված կլինի կոմունիստական շինարարությունն աղողությունը» (Նույն տեղը, էջ 329):

Ինչ ի՞նչ ուսուցանել, — այս հարցին Լենինը նորեն վերադառնում է Ն. Կ. Ստեպանովի դրժին կցած («Ռ. Ս. Խ. Ծ. Հ. ելեկտրիֆիկացիան») առաջարկում, ուր նա 1922 թ. մարտի 21-ին դրում է.

«Ժողովրդական լուսավորության դործում իսկական (և վոր չինքնիկական — պարապորդական) աշխատանք տանելու համար մենք ամենից շատ պակասություն ճնդ գդում հենց այսպիսի «դպրոցական ձեռնարկ»-ների (բոլոր, անպայման բոլոր դպրոցների համար): Յեթե մեր բոլոր մարքսիստ-դրականագետները իրենց ուժերը փոխանակ բոլորին ձանձրացնող լրագրային և ժուռնալային քաղաքական ճոճոսան հոդվածների վրա վատնելու, աշխատելին նման ձեռնարկներ կամ դասադրժեր տալ հասարակական առանց բացահայտ

Թիան բոլոր հարցերի վերաբերյալ, այն ժամանակ մենք չենք ասել, որ այն ամբողջ, վոր պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանությունը նվաճելուց համարյա հինգ տարի անց, նրա, պրոլետարիատի, պետական զարույններում և համալսարաններում հին բուրժուական դիտանկանները յեթիտասարդությունը հին բուրժուական փթած բաներ են ուսուցանում (ամենի ճիշտ՝ յեթիտասարդությունը այլասեռում են) :

Սոբորոդների VIII համադումարը վորոշել է, վոր ելեկտրիֆիկացիայի պլանի դասավանդությունը պարտադիր է Ռ. Ս. Ս. Ֆ. Հ. բոլոր, առանց բացառության բոլոր կըրթական հիմնարկությունների համար : Այդ վորոշումը, ինչպես և ուրիշ շատ վորոշումներ, թղթի վրա ցնաց մեր (մեր՝ բոլշևիկներին) անկուլտուրականության հետեանքով : Այժմ, ընկ. Ստեպանովի ներկա « զարոգական ձեռնարկ »-ի լույս տեսնելով, պետք է աշխատել հասնել (և կհասնենք) նրան, վորպեսդի ամեն մի դավառական գրադարանում (իսկ հետո ամեն դավառակային) այդ « ձեռնարկից » մի քանի ուրեմակ լինի. վորպեսդի Ռուսաստանում յուրաքանչյուր ելեկտրական կայանում (իսկ դրանց թիվը 800-ից ավելի յե) այդ գիրքը վոչ միայն լինի, այլ և կադմակերպվեն հասարակական ժողովրդական պարտադիր ընթերցանություններ ելեկտրականության մասին, Ռ. Ս. Ֆ. Հ. ելեկտրիֆիկացիայի մասին և ընդհանրապես տեխնիկայի մասին. վորպեսդի ժողովրդական ամեն մի ուսուցիչ ամեն մի դարոցում այդ « ձեռնարկը » կարգա և յուրացնի (այդ դործին ողնելու համար ամեն դավառում պետք է կադմակերպվի ինժեներներ և ֆիզիկայի դասատուներ խմբակներ), և վոչ միայն ինքը կարգա, հասկանա ու յուրացնի, այլ և կարողանա այդ պարզ ու հասկանալի կերպով պատմել դարոցի աշակերտներին և ընդհանրապես դյուրացիական յեթիտասարդությունը :

Դրան հասնելու համար մեծ աշխատանք պետք է դործենք : Մենք — աղքատ մարդիկ ենք և անկուլտուրական մարդիկ ենք : Հող չենք : Միայն թե դիտակցենք, վոր պետք է սովորենք : Միայն թե ցանկություն ունենանք սովորելու :

Միայն թե պարզ հասկանանք, վոր այժմ բանվորն ու գյուղացին պետք է սովորեն վոչ թե կալվածատերերին ու կապիտալիստներին « ոգուտ » կամ շահույթ տալու համար, այլ վորպեսդի իրենց կյանքը բարելավեն :

Իսկ այդ ամենը — կա : Ուստի և մենք սովորելու յենք ու կսովորենք : (Հ. XVII, մ. II, էջ 18 — 19) :

Բայց դարոցում լուսավորական դործը, ինչպիսին ել լինի, պետք է կապված լինի քաղաքականության հետ : Գաղութարկների խորհրդակցության մեջ (1920 թվի նոյեմբ. 3) արտասանած իր ճառում Լենինը հանգամանորեն զարգացնում է այդ միտքը :

« Ամենադիսավոր հարցն այն է, թե լուսավորությունը ինչ կապ պիտի ունենա մեր քաղաքականության հետ : Մենք մեր ամբողջ կըրթա-լուսավորական աշխատանքում չենք կարող կանգնել այն հին տեսակետի վրա, վոր պաշտպանում է լուսավորության ապաքաղաքական բնույթը, չենք կարող լուսավորության դործը քաղաքականության հետ չկապել :

Այդպիսի կարծիք տիրել է և տիրում է բուրժուական հասարակության մեջ : Լուսավորության « ապաքաղաքական » կամ « անքաղաքական » անունը — դա բուրժուադիայի կեղծավորությունն է, դա վոչ այլ ինչ է, յեթե վոչ — մասսաներին խաբել : Բուրժուադիան իշխելով բոլոր՝ մինչև այժմ դեռ բուրժուական՝ յերկրներում, մասսաներին հենց այդ կերպ խաբելով և դրադված : Բուրժուական բոլոր պեթությունների մեջ քաղաքական ապարատի կապը լուսավորության հետ շատ ուժեղ է, թեև բուրժուական հասարակությունն այդ ուղղակի խոստովանվել չի կարող : Մինչդեռ այդ հասարակությունը մասսաներին մշակում է յեկեղեցու միջոցով, մասնավոր սեփականության ամբողջ ինստիտուտի միջոցով :

Մեր հիմնական նպատակը կայանում է ի միջի այլոց նրանում, վոր բուրժուական ճամարտությունը վորպես հակաիշխու, հակադերենք մեր ճամարտությունը և ստիպենք այդ ճանաչել » : (Հ. XVIII, մ. II, էջ 178 — 179) :

Լուսավորական աշխատանքի և քաղաքականության միջև լինելիք ամենասերտ կապի անհրաժեշտություն մասին իր հայտնած հայացքի կապակցությամբ, Լենինը վերջում և նաև ուսուցչության դերը:

«Լուսավորումը յերկար պայքար ապրեց, յերկար ժամանակ ուսուցչական կազմակերպությունը պայքարեց սոցիալիստական հեղաշրջման դեմ: Այդ պայքարն արտահայտեց ուղղակի սարսափի և բուրժուական համառորեն պահպանող նախապաշարունակների կերպարանքով, և մենք պետք է դանդաղ, քայլ առ քայլ, կոմունիստական դիրքեր նվաճենք Գլխավորության համար, վորն արտադրողական կրթության ուղղությամբ և աշխատում, այդ կրթության և մասսաների լուսավորության խնդիրն է վճռում: Այստեղ առանձնապես ցայտուն կերպով հանդես է դալիս կուսակցական ղեկավարության դուգորդման խնդիրը. կուսակցությունը պետք է իրեն յենթարկի, իր շնչով համակի, իր նախաձեռնության կրակով վառի հակապական ապարատը — ուսուցչական պերսոնալի կեսմիլիոնանոց բանակը, վորն այժմ սպասավորում է բանվորությանը: Լուսավորության աշխատավորները, ուսուցչական պերսոնալը, դաստիարակված են բուրժուական նախապաշարունակների և սովորությունների վողով, պրոլետարիատին թշնամական վողով, նրանք միանգամայն կապված չեն յեղել պրոլետարիատի հետ: Այժմ մենք պետք է դաստիարակենք մանկավարժական, ուսուցչական պերսոնալի նոր բանակ, վորը պետք է սերտ կապված լինի կուսակցության հետ, նրա իդեյաների հետ, տողորված լինի նրա վողով, դեպի իրեն դրավի բանվորական մասսաները, նրանց համակի կոմունիզմի վողով, նրանց հետաքրքրի այն բանով, ինչ կոմունիստներն են անում:

Գանի վոր խղել պետք է կապերը հին սովորությունների, ունակությունների, իդեյաների հետ, — այստեղ Գլխավորության և նրա աշխատավորների առաջ մի կարևորագույն խնդիր է ծագում, վորի վրա պետք է ամենալուրջ ուշադրություն դարձնել: Յեվ իրող, այստեղ մեր առաջ

կանդնում է մի գիլլեմա, ի՞նչպես հին չաղախի ուսուցչությունը կապել կուսակցական կոմունիստների հետ: Այդ հարցը չափադանց դժվար է, և դրա մասին պետք է չառ և չառ խորհել:

Գնենք, թե ինչպես պետք է կազմակերպություն միացնել այդքան տարբեր մարդկանց: Մեզ համար սկզբունքորեն չի կարող տարակուսելի լինել այն, վոր այստեղ պետք է կոմունիստական կուսակցության գլխավորությունը լինի: Այդպիսով, քաղաքական կրթության նպատակն է — դաստիարակել ճշմարիտ կոմունիստներ, վորոնք ընդունակ լինեն հաղթելու սուտը, նախապաշարունակները և ոգնելու աշխատավոր մասսաներին հաղթահարելու հին կարգերը և պետական շինարարության դործն առաջ տանելու առանց կապիտալիստների, առանց չահագործողների, առանց կալվածատերերի: Իսկ այդ ի՞նչպես անել: Այդ հնարավոր է՝ միայն տիրանալով այն բոլոր գիտելիքներին, վոր ուսուցիչները ժառանգել են բուրժուազիայից: Առանց դրան՝ անհնարին կլինի յեն կոմունիզմի բոլոր տեսնիկական նվաճումները, և դրանց մասին ամեն յերազանք դատարկություն կլինի: Յեվ ահա հարց է առաջ դալիս. ի՞նչպես դրանց կապել, այդ աշխատավորներին, վորոնք սովոր չեն քաղաքականության հետ կապված աշխատանք տանել և մասնավորապես մեզ համար ողտակար, այսինքն՝ կոմունիզմի համար անհրաժեշտ քաղաքականության հետ կապված աշխատանք տանել: Այդ, ինչպես ասացի, չառ դժվար խնդիր է: Կուսակցության յուրաքանչյուր կոմիտե այժմ պետք է նոր ձևով նայի ամեն մի պրոպագանդիստի վրա, վորի վրա առաջ նայում է յին, վորպես վորոշ կամբակի, վորոշ կազմակերպության մարդու վրա: Նրանցից յուրաքանչյուրը պատկանում է կուսակցությանը, վորը կառավարում է, վորը ղեկավարում է ամբողջ պետությունը, ի՞նչպե՞ս հրդային Ռուսաստանի համաշխարհային կոլովը՝ բուրժուական հանրակարգի դեմ: Նա ներկայացուցիչն է հանդիսանում մարտնչող դասակարգի և կուսակցության, վորն իշխում է և պետք է իշխի պետական հակապական ապարատի

վրա: Շատ և շատ կոմունիստներ, վորոնք հիանալի կերպով անցել են ընդհատակյա աշխատանքի դպրոցը, կովի մեջ փորձված ու կտրված, չեն ցանկանում և չեն կարողանում հասկանալ ամբողջ կարևորությունն այդ բեկումի, այդ անցումի, յերբ ագիտատոր-պրոպագանդիստից նա դառնում է ագիտատորների ղեկավար, քաղաքական հսկայական կազմակերպության ղեկավար:

Յեւ չենց դրանց վրա յե ընկնում ուսուցչական պերսոնալի մեջ աշխատանք տանելու գործը: Պետք է ասել, վոր հարյուր հազար ուսուցիչներ — այդ մի այնպիսի ապարատ է, վորը պետք է առաջ տանի աշխատանքը, զարթեցնի միտքը, կովի նախապաշարմունքների դեմ, վորոնք դեռ մինչև այժմ եւ դոյություն ունեն մասսաների մեջ: Սակայն կապիտալիստական կուլտուրայի բռնությունը, այն հանգամանքը, վոր ուսուցչական մասսան համակված է նրա թերություններով և այդ թերություններն ունենալով նա չի կարող լինել կոմունիստական, — դա չպետք է խանգարի, վոր այդ ուսուցիչներն առնվեն լուսավորական-քաղաքական աշխատանք տանող աշխատավորների շարքերը, քանի վոր այդ ուսուցիչները տիրապետում են գիտելիքների, առանց վորոնց մենք չենք կարող հասնել մեր նպատակին:

Մենք պետք է կոմունիստական լուսավորությանը հարյուր-հազարավոր պետքական մարդիկ ծառայեցնենք: Այդ մի խնդիր է, վոր վճովեց ֆրոնտում, մեր կարմիր բանակում, վորի մեջ առնվեցին հին բանակի տանյակ հաղարար-վոր ներկայացուցիչներ: Այդ մի յերկար պրոցես եր, վերադաստիարակման պրոցես, բայց վերջիվերջս դա ավարտվեց, և մեր կուլտուրական — լուսավորական աշխատանքում մենք պետք է հետեւենք այդ ուղին: Յուրաքանչյուր ագիտատոր և պրոպագանդիստ մեզ համար անհրաժեշտ է, նա իրադրոծում է իր խնդիրը, յերբ աշխատում է խիստ կուսակցական վոդով, բայց չի սահմանափակվում միայն կուսակցութեամբ, այլ հիշում է, վոր իր խնդիրն է՝ ղեկավարել հարյուր հազարավոր ուսուցչական պերսոնալը, հետաքրքրել նրանց, հաղթահարել հին բուրժուական նա-

խապաշարմունքները, նրանց քաշել այն գործի մեջ, ինչ վոր մենք ենք անում, նրանց վարակել մեր աշխատանքի մեծութեան գիտակցութեամբ. և միայն այնպիսի աշխատանքի անցնելով, մենք կարող ենք ուղիղ ճանապարհի վրա բերել այդ մասսան, վորին կապիտալիզմը տրորել է, վորին կապիտալիզմը մեղնից հեռացրել է:

Մեր խնդիրն է — հաղթահարել կապիտալիստների բոլոր դիմադրությունները, վոր միայն գինվորական և քաղաքական, այլ և իդեյական, ամենից խորը և ամենից գործող: Լուսավորութեան մեր աշխատավորների խնդիրն է — իրականացնել մասսայի այդ վերամշակումը: Նրա՝ դեպի լուսավորությունն ու կոմունիզմի գիտությունն անցած հետաքրքրությունը, ձգտումը, վոր մենք նկատում ենք, յեւրաշխեք են, վոր մենք այստեղ եւ հաղթող կհանդիսանանք, թեև կարող է պատահել վոր այնպես չուտ, ինչպես ֆրոնտում, կարող է պատահել մեծ դժվարություններով, դուցե և մերթ ընդ մերթ պարտություններով, բայց վերջի վերջո հաղթողները մենք կլինենք»: (Հ. XVIII, մ. II, էջ 182—184):

Ուսուցչությունն իր հիմնական մասսայով անկուսակցական է: Ի՞նչ կա վոր:

Կոմիտեները պետք է սովորեն իրենց յետևից տանելու նաև անկուսակցական ուսուցիչներին:

«Կոմունիստական հասարակություն կառուցել կոմունիստների ձեռքերով — այդ յերեխայական, միանգամայն յերեխայական իդեյա յե», ասում եր Լենինը Խ. Կ. XI համագումարին (1922 թ. ոգոստ. 27): «Կոմունիստները — մի կաթիլ են ծովում, մի կաթիլ են ժողովրդական ծովում: Նրանք միայն այն դեպքում կարող են ժողովրդին իրենց ճանապարհով տանել, յեթե ձիւտ փորոշեն ճանապարհը՝ համալսարհային պատմական ուղղութեան իմաստով»:

«Հաղթանակի յերկրորդ մասը կաղմում է այն, վոր կոմունիզմը կառուցվի վո՛չ — կոմունիստական ձեռքերով...» (Հ. XVIII, մ. II, էջ 44—45), դրում է նա այնուհետև: Ահա՛ թե ինչու Լենինը «Լուսավորչական աշխատանքի մասին» իր հոդվածում (1921 թ. փետր. 7) ասում է.

ժողովրդական լուսավորության առաջնություն (և հիմնարկություններում) գործող կոմունիստի աշխատանքի հանդուրժանքը պետք է չափվի նախ նրանով, թե ինչպես է դրված սպեցիներին աշխատանքի մեջ առնելու գործը, սպեցներ գտնելու կարողությունը, դրանց ոգտադործելու կարողությունը, սպեց-մանկավարժի և կոմունիստ-դեկավարի գործակցությունը իրականացնելու կարողությունը, ստուգելու, թե կյանքում ի՞նչ է իրականացվում և ի՞նչ չափով, առաջ շարժվելու կարողությունը—թո՛ղ այդ լինի թեկուզ չափազանց դանդաղ, չափազանց համեստ չափերով, միայն թե կատարվի գործի հիման վրա, պրակտիկ փորձի հիման վրա: Իսկ յեթե մեզ մոտ առաջիկայում ևս Լուս-ժողովրդական «կոմունիստական դեկավարություն» ստանձնելու պահանջ անողների լիություն լինի և պրակտիկ գործի ասպարիզում տիրի դատարկություն, սպեց-պրակտիկների պակասություն կամ բացակայություն, նրանց առաջ քաշելու, նրանց ականջ դնելու, նրանց փորձը հաշվի առնելու անկարողություն, — այդ դեպքում գործն առաջ չի դնա: Դեկավարող-կոմունիստը դեկավարության իր լրավունքը պետք է ապացուցի նրանով, միայն նրանով, վոր նա մանկավարժ-պրակտիկների միջից իր համար հետդհետե ավելի ու ավելի շատ ոգնականներ է գտնում, վոր նա կարողանում է ողնել նրանց աշխատելու, կարողանում է նրանց առաջ քաշել, նրանց փորձը ցուցադրել և հաշվի առնել:

Այդ իմաստով մեր անպայման լողունքը պետք է լինի — ավելի քիչ՝ «դեկավարություն», ավելի շատ՝ գործնական աշխատանք, այսինքն՝ ավելի քիչ դեպիլել ընդհանուր դատողություններով և ավելի շատ ցուցադրել փաստեր ու ստուգված փաստեր, վորոնք ցույց տալին, թե ինչի մեջ, ինչ պայմաններում և ինչ չափով ենք մենք առաջ շարժվում, կամ տեղում կանգ ենք առած, կամ յետ ենք նահանջում: Այն կոմունիստ-դեկավարը, վորը ուղղել է պրակտիկ-մանկավարժների դասավանդության ծրագրերը, այնպիսի մանկավարժների, վորոնք տասնյակ,

հարյուրավոր, հազարավոր սպեց-մանկավարժների աշխատանքի պայմաններում հաջող դասադրքեր են կազմել, աշխատանքի բովանդակության տեսակետից հասել են թեկուզ չնչին, բայց գործնականում իրականալի բարելավման, — ահա այդպիսի կոմունիստն է իսկական դեկավարողը: Իսկ այն «կոմունիստը», վորը «դեկավարության» մասին է խորհում և չի կարողանում սպեցներին հարմարեցնել գործնական աշխատանքի, չի կարողանում նպաստել, վոր նրանք գործնականում հաջողություն ունենան, չի կարողանում ոգտադործել հարյուր հազարավոր ուսուցիչների գործնական փորձը, — այդպիսի կոմունիստը վո՛չինչ չարժե»: (Վ. XVIII, մ. I, էջ 75 — 76):

Ուսուցիչների վրա չափազանց պատասխանատու խնդիր դնելով, «Մի եջ հուշատետրից» իր հոդվածում (1923 թ. հունվ. 2) Լենինը հիշատակում է.

«Ժողովրդական ուսուցիչը մեզ մոտ պետք է դրվի այնպիսի բարձրության վրա, վորպիսի բարձրության վրա նա յերբեք կանգնած չի յեղել, կանգնած չի ու չի կարող կանգնել բուրժուական հասարակության մեջ: Այս մի ճշմարտություն է, վոր ապացույցի կարիք չունի: Միտե՛մատիկ, անշեղ, համառ աշխատանքով մենք պետք է ձրդտենք այդ վիճակին հասնել, ուսուցչին պետք է հոգեպես բարձրացնենք, նրա իրոք բարձր կոչման համար՝ նրան բաղմակողմանի պատրաստություն տանք և վոր դլխավորն է, դլխավորն է և գլխավորն է — բարեկամենք նրա տրնտեսական դրուկությունը:

Անհրաժեշտ է սիստեմաբար ուժեղացնել ժողովրդական ուսուցիչների կազմակերպման աշխատանքը, վորպեսզի նրանք դադարեն բուրժուական հանրակարգի հենակետ լինելուց, ինչ վոր նրանք մինչև որս հանդիսանում են՝ առանց բացառության բոլոր կասկածալիստական յերկրներում, և դրանց դարձնել հենակետ խորհրդային հանրակարգի, վորպեսզի դրանց միջոցով դյուղացիությունը հեռացվի բուրժուադիայից և դաշն կնքի պրոլետարիատի հետ»: (Վ. VIII, մ. II, էջ 15): Անուհետե՛

«Անհրաժեշտ է, վոր մեր առաջիկա բյուզեն ընենելիս
գործնական քայլեր անենք այդ ուղղությամբ: Իհարկե,
առաջին հերթին պետք է կրճատվեն վոչ թե Լուսժողկո-
մատի, այլ ուրիշ հիմնարկությունների ծախքերն այն հաշ-
վով, վոր աղատված գումարները հատկացվեն Լուսժողկո-
մատի կարիքներին: Չպետք է դժուած լինել և ուսուցիչներին
տրվելիք հացի քանակը պետք է ավելացնել այս տարի, յերբ
մենք համեմատաբար տանելի չափով ապահովված ենք
դրանով:

Այն աշխատանքը, վոր այժմ տարվում է ժողովրդական
կրթության ասպարիզում, ընդհանուր առմամբ չի կարող
չատնել համարվել: Քիչ բան չի արվում՝ հին ուսուցչու-
թյունը տեղից շարժելու համար, նրան դեպի նոր խնդիր-
ներ զրավելու, նրան հետաքրքրելու մանկավարժության
հարցերի նոր դրամով, հետաքրքրելու այնպիսի հարցերով,
ինչպիսին է կրոնական հարցը:

Իայց մենք չենք անում չլիսավորը: Մենք չենք հոգում
կամ չափազանց անբավարար չափով ենք հոգում, վոր ժո-
ղովրդական ուսուցիչը դրվի այն բարձրության վրա, առանց
վորի խոսք չի կարող լինել և վոչ մի կուլտուրայի մասին —
վոչ պրոլետարական և վոչ ել նույն իսկ բուրժուական կուլ-
տուրայի մասին: Պետք է խոսել այն կիսաասիական ան-
կուլտուրականության մասին, վորպիսի դրությունից մինչև
այժմ դուրս չենք յեկած և չենք կարող դուրս գալ առանց
լուրջ ջանքեր դրած դնելու, թեև հնարավորություն ունենք
դուրս գալու, քանի վոր վոչ մի տեղ ժողովրդական մաս-
սաներն իսկական կուլտուրայով այնպես հետաքրքրված
չեն, ինչպես մեզ մոտ, — վոչ մի տեղ այդ կուլտուրայի
հարցերն այնպես խորը և այնպես հետևողաբար չեն դըր-
վում, ինչպես մեզ մոտ. վոչ մի տեղ, վոչ մի յերկրում պե-
տական իշխանությունը չի դտնվում բանվոր դասակարգի
ձեռքում, բանվոր դասակարգի, վորն իր մասսայով շատ
լավ է հասկանում իր — չեմ ասում կուլտուրականության,
այլ ասում եմ — դրադիտության թերությունները. վոչ մի
տեղ նա այդ ուղղությամբ, իր դրությունը բարելավելու

համար, պատրաստ չեն անելու և չի՝ անում այնպիսի դժարե-
րություններ, ինչպես մեզ մոտ:

Մեզ մոտ դեռևս շատ քիչ, չափազանց քիչ բան է ար-
վում՝ պետական բյուզեն առաջին հերթին ժողովրդական
տարրական կրթության կարիքների կողմը թեքելու համար:
Մեզ մոտ նույնիսկ, Լուսժողկոմատում ամենուրեք կարելի
յե դտնել չափազանց ուռցրած շտատներ վորևե պետհրատի-
չեն մտածում այն մասին, վոր պետությունը առաջին հեր-
թին պետք է հողա վոչ թե հրատարակչության մասին, այլ
այն մասին, վոր ընթերցողներ դտնվեն, վոր կարդալ իմա-
ցողներին մեծ թիվ լինի, վորպեսզի ապագա Ռուսաստա-
նում հրատարակչության քաղաքական թափը ավելի լինի:
Տեխնիկական հարցերին, ինչպիսին է հրատարակչության
հարցը, մենք դեռևս հին (վատ) սովորությամբ ավելի շատ
ժամանակ և ուժեր ենք հատկացնում, քան ժողովրդական
գրադիտության ընդհանուր քաղաքական հարցին:

Յեթե վերցնենք Պրոֆ. Կրթ. Գլխ. Վարչությունը,
ապա այստեղ ևս, հավատացած ենք, կարելի յե շատ և շատ
ավելորդ բան դտնել, վոր ուռցրած է տվյալ հիմնարկու-
թյան շահերի տեսակետով, վորոնք համաձայնեցրած չեն
ժողովրդական լայն կրթության պահանջներին: Պրոֆ
Կրթ. Գլխ. Վարչության մեջ ամեն ինչ չե, վոր արդարաց-
վում է նախ մեր գործարանային յերկտասարդության կըր-
թությունը բարձրացնելու և դրան գործնական ուղղու-
թյուն տալու ուղինական ցանկությամբ: Յեթե ուշադրու-
թյամբ ընենք Պրոֆ. Կրթ. Գլխ. Վարչության շտատները,
դուրս կգա, վոր դրանցից շատ շատերն այս տեսակետից
ուռցրած և ֆիկտիվ են, յենթակա յեն փակման:

Պրոլետարական-գյուղացիական պետության մեջ ելի շատ
և շատ բան կարելի յե տնտեսել և պետք է տնտեսել՝ ժո-
ղովրդական գրադիտությունը զարգացնելու համար, ամեն
տեսակի՝ կիսով չափ աղայական տիպի խաղալիքները կամ
այնպիսի հիմնարկություններ փակելու գնով, առանց վո-
րոնց մենք դեռ կարող ենք ու յերկար կկարողանանք և
պետք է կարողանանք յուրա դնալ ժողովրդական գրադի-

տության այն դրութեամբ, վերի մասին խոսում եւ հետ-
տխտիկան» : (Հ. XVIII, մ. II, էջ 113 — 115) :

Գանի առաջ ենք անցնում, մենք տեսնում ենք, վեր լե-
նինն ավելի ու ավելի մեծ նշանակութիւն եւ տալիս կու-
տուրայի վերելքին : Գաղղուսլարների համառութեան
II համագումարում արտասանած իր ճառում (1921 թ.
հոկտ. 17) նա պնդում ե՝ «կուլտուրայի վերելքն ինդիւրը
— հերթական առաջնակարգ խնդիրներից մեկն է» : «Աշ-
խարհումս քաղաքական ամենամեծ հեղաշրջման խնդիրը
վճռելուց հետո, մեր առաջ կանգնեցին ուրիշ խնդիրներ —
կուլտուրական խնդիրներ, վորոնք կարելի չէ «փոքրիկ
գործեր» անվանել : Գաղաքական այդ հեղաշրջումը պետք
է մարտել, մատչելի դարձնել աղղարնակութեան մասսա-
ներին, պետք է հասնել այն վիճակին, վոր քաղաքական
այդ հեղաշրջումը չմնա լուր գեկլարացիա» : (Հ. XVIII, մ.
II, էջ 381) :

«Այժմ (դեկտեմբեր, 1920 թ.) սկսվում է ռազմական
կամպանիա՝ քարացման, տղիտութեան եւ դյուղացիական
մասսաների մեջ յեղած անվստահութեան մնացորդների դեմ :
Հին միջոցներով այստեղ չես հաղթի. իսկ պրոպագանդի,
աղիտացիայի եւ կազմակերպված ներգործութեան միջոցնե-
րով, վորին սովորել ենք, — մենք կհաղթենք» : (Հ. XVII,
էջ 419) :

«Գաղաքական մոմենտի ամբողջ ելութիւնն այժմ կա-
յանում է նրանում, վոր մենք հենց բեկման, անցողական
շրջան ենք վերապրում, մի տեսակ զիդզադ (պտուլտներ), —
մի այնպիսի շրջան, յերբ մենք պատերազմից անցնում ենք
տնտեսական շինարարութեան : Այդ — առաջ ել ե յեղել,
բայց այնպիսի մեծ ծախսով չի յեղել» : (Նույն տեղը,
էջ 411) :

«Մենք լրիվ հաջողութիւն ունեցանք ղինլորական աս-
պարիզում ե այժմ պետք է նույնպիսի հաջողութիւն պա-
տրաստենք ավելի դժվար խնդիրների համար, վորոնք բան-
վորների եւ դյուղացիների հսկայական մեծամասնութիւնից
խանդավառութիւն ե ինքնադոհութիւն են պահանջում :
Նոր խնդիրներում պետք է համոզել հարյուր միլիոնավոր

մարդկանց, վորոնք սերնդից սերունդ ապրել են ստրկու-
թեան ե կեղեքման մեջ, վորոնց ամեն տեսակի ինքնագործ-
նեյութիւնը միշտ ճնշել են. պետք է համոզել միլիոնավոր
բանվորներին, վորոնք գտնվում են պրոֆիւթիւթիւնների
մեջ, բայց քաղաքականապես դեռես անգիտակից են, սո-
վոր չեն իրենց զգալու վորպես տեր. դրանց պետք է կազ-
մակերպել վոչ թէ իշխանութեանը դիմադրելու համար,
այլ իշխանութիւնը պաշտպանելու համար, իրենց բանվո-
րական իշխանութեան միջոցները զարգացնելու համար,
դրանք մինչև վերջը առաջ տանելու համար : Այդ անցումը
դժվարութիւնների հետ ե կապված. այդ նոր խնդիր չէ՝
հասարակ ձեւակերպման տեսակետից : Բայց այդ խնդիրը
նոր ե այն չափով, ինչ չափով այժմ տնտեսական խնդիրը
մասսայական մասշտաբով առաջին անգամն ե դրվում ե
մենք պետք է դիտակցենք ու հիշենք, վոր տնտեսական
Ֆրոնտում կոիմի ավելի դժվար ե ավելի յերկարատեւ
կլինի. այդ Ֆրոնտում հաղթելու համար, պետք է բանվոր-
ների ե դյուղացիների ավելի մեծ թիւ դարձնենք ինքնա-
գործունյա, ակտիւ ե անձնվեր : Այդ կարելի՛ չէ անել —
հողուտ դրան ե խոսում տնտեսական շինարարութեան մեր
ձեռք բերած փորձը — վորովհետեւ արագորոգական ուժերի
պակասութեան հետ կապված աղքատութեան, քաղցի, ջր-
տի ե ամեն տեսակի գրկանքների գիտակցութիւնը խորն
ե արմատանում մասսայի մեջ : Այժմ մենք պետք է մեր
ուշադրութիւնն ուղղենք այն հանգամանքի վրա, վոր ամ-
բողջ աղիտացիան ե ամբողջ պրոպագանդը քաղաքական ու
ռազմական շահերից փոխադրենք տնտեսական շինարարու-
թեան ոեւնների վրա : Այդ մենք շատ անգամ ենք հայտա-
բարել, բայց դեռ բավական չէ, ե խորհրդային իշխանու-
թեան այս տարվա ընթացքում իրականացրած միջոցներից
իմ կարծիքով առանձնապես աչքի չէ ընկնում պրոֆեսիո-
նալ միութիւնների համառութեան կենտրոնական խոր-
հուրդին կից արտադրական պրոպագանդի կենտրոնական
բյուրոյի ստեղծումը, դրա միացումը Գաղղուսլարի
աշխատանքին, արտադրական ծրագրի հիման վրա կա-
ռուցված լրագրերի քաղցածում — վոչ միայն ուշադրու-

Թյունը փոխադրելով արտադրական պրոպագանդի վրա, այլ և այլ պրոպագանդը պետական մասշտաբով կազմակերպելով:

Պրոպագանդի գործն ընդհանուր պետական մասշտաբով կազմակերպելու անհրաժեշտությունը բխում է քաղաքական մոմենտի բոլոր առանձնահատկություններից: Այդ անհրաժեշտ է և՛ բանվոր դասակարգին, և՛ պրոֆմիլություններին, և՛ դյուղացիությանը. այդ — ամենամեծ անհրաժեշտությունն է մեր պետական ապարատի համար, վորը մենք չառ քիչ ենք ռեպրոդուցել այդ նպատակով: Թե ի՞նչ պես պետք է վարել արդյունադործությունը, ի՞նչպես պետք է շահադրուհել մասսաներին, այդ մասին մեզ մոտ դրքույկային գիտելիքների խմայումը հազար անգամ ավելի՛ յն քան թե այդ գիտելիքների կիրառումը գործնականում:

Պետք է ձգտենք հասնել այն վիճակին, վոր պրոֆմիլության բոլոր անդամները գիտովին շահադրուհված լինեն արտադրության մեջ և վորպեսզի նրանք հիշեն, վոր խորհրդային Ռուսաստանը ի վիճակի կլինի հաղթել միայն այն ժամանակ, յերբ կալիկադնի իր արտադրությունը, յերբ կբարձրացնի իր արտադրողականությունը: Միայն այդ ճանապարհով է, վոր խորհրդային Ռուսաստանը տասը տարով կկրճատի այն սարսափելի պայմանները, վորոնց մեջ նա գտնվում է, — այն քաղցն ու ցուրտը, վոր վերապրում է»:

(Հ. XVII, էջ 414 — 415):

Անհրաժեշտ է աշխատել, «վոր դյուղացիական մասսաները և պրոֆմիլությունների անդամներն այդ հասկանան աշտ՝ վորպեսզի նրանք հասկանան, վոր հին ձևով ապրել չի կարելի, վոր տասնյակ տարիներ ընթացքում կապիտալիստական շահադործումը ինչքան էլ արմատացած լինի, — պետք է այդ հաղթահարել: Պետք է հասնել այն վիճակին, վոր բոլորը հասկանան, վոր Ռուսաստանը մեզ է պատկանում, վոր մենք՝ բանվորական և դյուղացիական մասսաները՝ մեր գործնականությամբ, մեր աշխատանքային խիստ գիտելիքնայով, միայն մենք կարող ենք վերստին ծել դոյություն եկոնոմիական հին պայմանները և կենսագործել տնտեսական մեծ ծրագիրը»:

(Մենք պետք է համոզենք անկուսակցական դյուղացիներին» (էջ 417), «մենք պետք է համոզենք միլիոնավոր մարդկանց»:

(էջ 419):

«Վորքան մեծ է այն փոփոխությունը, վոր մենք կատարել ենք ցանկանում, դեպի այդ այնքան ավելի՛ պետք է հետաքրքրություն և գիտակցական վերաբերմունք դարձնել, այդ անհրաժեշտության մեջ համոզել նորանոր միլիոնավոր և տասնյակ միլիոնավոր մարդկանց»:

(էջ 413):

Լենինը դյուղացիության և պրոֆմիլությունների մեջ տարվող աշխատանքի անհրաժեշտության մասին վոչ միայն խոսում, այլ և գործնական առաջարկություններ է անում. Խ. Կ. Կ. VIII համագումարի (մարտ, 1919 թ.) վորոշումները, վոր դրել է Լենինը, իրենց մեջ չառ թանկարժեք գործնական ցուցմունքներ են պարունակում: Մեջ ենք բերում այդ ռեզոլյուցիան.

«Ի նկատի ունենալով պրոլետարիատի և չքավոր դյուղացիության՝ միջակ դյուղացիության հետ ունեցած հաստատուն ու տեական համաձայնության անհրաժեշտությունը և այն հանգամանքը, վոր քաղաքական խավարը, ընդհանուր տղիտությունը և դյուղատնտեսական գիտելիքների ցածր մակարդակը դյուղում այդ համաձայնությանը խորը և լուրջ խոչնդոտ են հանդիսանում, չքավոր ու միջակ դյուղացիությունը միաժամանակ մատնում աղքատության ու քարացման, — կոմունիստական կուսակցությունը չի կարող ամենալուրջ ուշադրությամբ չվերաբերվել դյուղի լուսավորությանը՝ բառիս լայն մտքով:

Գյուղի լուսավորական գործնականության ծրագրի մեջ, իրար հետ խորը համաձայնության բերվելով, պիտի մտնեն՝

- ա) կոմունիստական պրոպագանդը.
- բ) ընդհանուր կրթությունը.
- գ) Ագրիկուլտուրային կրթությունը:

1. Քաղաքական պրոպագանդը դյուղում պետք է տարվի և՛ գրագետների համար, և՛ անգրագետների համար:

Գրագետների համար առաջին տեղը պետք է բռնի ընդհանուր քաղաքական և հատկապես դյուղացիների համար

հրատարակած մտազեղի խիստ կոմպլեքսային միջով դուրս
ված դրակառուցման և լրագրերի տարածումը: Այդպիսի
դրականությունը ըստ կարելույն աժան դնով պետք և
ծախվի դպրոցներին, խրճիթ-ընթերցարաններին կից և խոր-
հրդային բոլոր խանութներում:

Պետք և աշխատել, վոր ամեն դպրոցին կից կազմա-
կերպվի դրադարան ընթերցարան՝ քաղաքական բաժնով և
վորպեսզի այդպիսի դրադարան-ընթերցարաններ լինեն յու-
րաքանչյուր դպրական ժողովրդական տանը կից, իսկ ուր
այդպիսի տներ չկան, քաղաքական մատչելի դրականու-
թյունը պետք և խրճիթ ընթերցարանի դրախմենտարի ան-
հրաժեշտ փոքրիկ մասը կազմի:

Փոքրահասակների դպրոցների դասընթացի մեջ, ինչ-
պես նաև չափահասների համար կազմակերպած ամեն տե-
սակի՝ թե հանրակրթական և թե մասնադիտական-տեխնի-
կական դասընթացներում (որինակ՝ դյուղատնտեսական)
պետք և մտցնել՝ 1) կուլտուրայի պատմության մատչելի
տեսություններ՝ գիտա-սոցիալիստական տեսակետից, Ռու-
սական Մեծ Հեղափոխության պատմությանը նվիրված հա-
տուկ մշակած բաժնով: 2) Սորհրդային սահմանադրու-
թյան պարզաբանությունը: Այդ յերկու դասընթացների հա-
մար անմիջապես պետք և կազմվեն որինակելի դպասադրեր:

Ուսուցիչները պարտավոր են իրենց վրա նայել վոչ
միայն վորպես ընդհանուր, այլ վորպես կոմունիստական
լուսավորության գործակատարներին վրա:

Այդ տեսակետից նրանք պետք և յենթարկվեն վոչ միայն
իրենց անմիջական կենտրոններին, այլ և կուսակցական տե-
ղական կազմակերպությունների կոնտրոլին:

Կինեմատոգրաֆը, թատրոնը, համերգները, ցուցահան-
դեսները և այլն, ինչ չափով վոր դրանք մուտք կդրժեն
դյուղում (իսկ դրա համար մենք պետք և ամեն ջանք դործ
դնենք), անհրաժեշտ և ոգտագործել կոմունիստական պրո-
պագանդի համար թե անմիջականորեն, այսինքն՝ նրանց բո-
վանդակության միջոցով, և թե դրանցը դասախոսություն-
ներ ու միտինգներ միացնելու ճանապարհով:

Ժողովրդական լուսավորության նահանգային և դասըն-
տային բաժինները կուսակցության անդամական կազմակեր-
պությունների ոգնություններ և նրանց կոնտրոլի տակ հիմ-
նում են պրոպագանդիստների կոլլեգիաներ — մի մասը
նստակյաց, այսինքն՝ իր բնակության տեղին ամրացրած,
մյուս մասը — չբջիկ, այսինքն՝ քիչ թե շատ լայն շրջանը
շրջադայող:

Կոմունիստական կազմակերպությունները քաղաքային
խոշոր կենտրոններում, ժողովրդական Լուսավորության
կոմիտեի անդամ տեղական ուղանների հետ համաձայնությամբ
դալով, պետք և ստեղծեն պրոպագանդիստների-հրահան-
դիչների կոլլեգիաներ, վորոնք մասսաների մեջ անձամբ
շրջադայելով, պետք և պրոպագանդայով զբաղվեն, տեղե-
րում իրենց՝ ավելի պակաս փորձառություն ունեցող ընկեր-
ներին հրահանգեն:

Համապատասխան հատուկ ուղադրություն և դարձնում, վոր
այդ խնդրում ոգտագործվեն բանվորական ուժերն այն ին-
դուստրիալ բանվորական խմբերի, վորոնց ղեկավարում և
պրֆեսիոնալ Միությունների Համառուսական Սորհրդերը:

Անդրադետների համար պետք և կազմակերպել պարեմ-
րական ընթերցանություններ դպրոցներում, դավառակա-
յին պատգ. Սորհրդի շենքերում, խրճիթ-ընթերցարաննե-
րում և այլն, դրա համար ժողովրդական Լուսավորության
բաժանմունքները տեղական կուսակցական բջիչների աջակ-
ցությամբ հիմնում են ի լուր ընթերցանության առանձին
կրոսթոկներ (խմբակներ), վորոնց մեջ մտնում և տեղական
ուսուցչությունը՝ դրադետների համար սահմանված առան-
ձին պարտադիր ծառայության կարգով: Ընթերցանության
նյութը պետք և լինեն դեկրետները և պարտադիր վորոշում-
ները, կենտրոնի (կուսակցական կամ խորհրդային) կողմից
հատկապես դրա համար հրատարակած և տարածած մատ-
չելի մեկնությունները և ժողովրդական շարունակ թար-
մալվող ու լրացվող քրիսթոմատիայից վերցված հոդված-
ներ: Ցանկալի յե, վոր այդպիսի ընթերցումները, հաճա-
խորդների մեծ թիվ դրախմելու համար, ուղեկցվեն դիտա-

դական նկարներով՝ կինեմատոգրաֆի կամ մոդական լապ-տերի ոգնութեամբ, գեղարվեստական ընթերցանութեամբ և համերգային բաժնով:

2. Ընդհանուր կրթութիւնը — դպրոցական և արտա-դպրոցական (սրա մեջ մտնում և նաև գեղարվեստականը՝ թատրոններ, համերգներ, կինեմատոգրաֆներ, ցուցահան-դեաները նկարների և այլն), ձգտելով վուժ միայն ղանադան գիտելիքների լուսը սփռել խալար դպրոցում, այլ և դըլ-խալորապես նպաստել ինքնագիտակցութեան ու պարզ աշ-խարհայեցողութեան մշակմանը, — պետք և սերտ միանա կոմունիստական պրոպագանդային: Ձկան գիտութեան և գեղարվեստի այնպիսի ձևեր, վորոնք կապված չլինեն կո-մունիզմի մեծ իդեյաների և կոմունիստական տնտեսութեան ստեղծման անսահման տարրեր աշխատանքի հետ:

Ինչ վերաբերում և դպրոցին, նրա վերանորոգման հարցը՝ միասնութեան և աշխատանքի հիմքերի վրա՝ սկզբունքորեն արդեն վճռված և: Մնում և միայն առան-ձին ուշադրութեան դարձնել չափահաս աղջարնակու-թեան արտադպրոցական կրթութեան բոլոր տեսակների վրա: Կուսակցութեան ամեն կերպ պետք և ոգնի խոր-հրդային իշխանութեանն ու տեղական աղջարնակչու-թեանը՝ ժողովրդական տների ըստ կարելույն լայն ցանց կազմակերպելու գործում, վորի համար առաջին հերթին պետք և ոգտադործվեն խորհրդային գույքերը: Ժողո-վրդական տները պետք և լինեն գյուղացիական ակումբ-ներ՝ հանգստի, խելացի դիպրճութեան և լայն լուսավո-րութեան համար, թե ընդհանուր և թե կոմունիստական լուսավորութեան համար:

Կոմունիստական կուսակցութեանը, թույլ տալով և խրախուսելով ամեն տեսակի մասնագետների և առհասա-րակ կրթված մարդկանց ոգտադործումն՝ ամենուրեք դասընթացներ կարդալու և ժողովրդական տներում ոգ-նելու համար, միաժամանակ պետք և հետևի, վոր Խոր-հրդային իշխանութեան թշնամի տարրերը չողտվեն ընդ-հանուր կրթութեան ապարատից և դրականութեան, գի-տութեան ու գեղարվեստի անվան տակ չանցկացնեն հա-

սարակականորեն միասակար, հակահեղափոխական և կամ կոմունիստական պրոպագանդի ջանքերը վորեւ և կերպ թուլացնող տենդենցներ:

3. Գյուղացիութեանը խիստ կարիք և դգում ագրոնոմիա-կան կրթութեան:

Խորհրդային կալվածները, ինչպես և դպրոց-ֆերմա-ները պետք և դառնան գյուղատնտեսական լուսավորու-թեան փարոսներ: Ժողովրդական կուսակցութեան կոմի-սարիատի հիմնած և նրա միջոցներով պահվող գյուղա-տնտեսական կրթութեան որդանները պետք և հողժողկո-մատի տնտեսական հիմնարկութեանների հետ ամենասերտ կոնտակտի մեջ լինեն:

Գյուղում չպետք և լինեն այնպիսի դպրոցներ, դասըն-թացներ և լուսավորական աշխատանք տանող վորեւ կադ-մակերպութեան, վորոնք, ուսուցումը արտադրողական աշխատանքին միացնելու սկզբունքի հիման վրա, միաժա-մանակ չձգտել լինել նաև որինակելի գյուղատնտեսու-թեան (լրիվ կամ մասնակի) կազմակերպութեաններ:

Գյուղատնտեսական կրթութեանը պետք և տարվի այն-պես, վոր նրա տվյալները կապվեն կոմունիստական յե-դրակացութեանների հետ և հենակետ հանդիսանան կուսակ-ցութեան ընդհանուր ձգտումին՝ գյուղացիական մասնա-վոր տնտեսութեանից վերստեղծել սոցիալիստական կադ-մակերպված տնտեսութեան:

Գյուղացիների մեջ տարվող պրոպագանդը չպետք և կարված լինի գյուղացի-հողագործի կենսական խնդիրնե-րից, բայց պետք և սերտ կապված լինի ագրոնոմիական տնտեսութեան հարցերի հետ:

Պետական դպրոցը պետք և միանգամայն բաժանված լինի ամեն տեսակի կրոնից, և կրոնական քարոզի կեր-պարանքի տակ յերևան յեկող հակահեղափոխական պրո-պագանդի ամեն տեսակի փորձը պետք և արմատում խեղդի:

Բայց խորհրդային Ռուսաստանի սահմանադրութեանը բոլոր քաղաքացիների համար դալմանների իրակատար ադատութեան և ընդունում, և համադրումը ուշադրու-

թյուն և դարձնում այդ իրավունքի վորեն ահմանադակ-
ման և կրոնական հարցերում բռնության նույնիսկ ստվերի
միանգամայն անթույլատրելիության վրա: Ամենախիստ
պատժի պետք է յենթարկվեն այն անձինք, վորոնք կրոնի
ազատության և ամեն դավանանքի պատկանող քաղաքա-
ցիներին աստվածապաշտության դեմ վրոնձողություններ
թույլ կտան»:

Քաղաքականության Համառուսական II համագումարում
արտասանած ճառում (17 հոկտեմբ. 1921 թ.) [ենինը մի
ամբողջ ծրագիր է տալիս քաղաքական աշխատանքի
համար:

«Մեզ մոտ անդրադիտության վերացման հանձնաժո-
ղովը կազմվել է 1920 թ. հուլիսի 19-ին: Նախ քան համա-
գումարին գալս, յես դիտմամբ կարգացի համապատաս-
խան դեկրետը: Անդրադիտության վերացման Համառու-
սական հանձնաժողով... Այդ քիչ է — անդրադիտության
վերացման արտակարգ հանձնաժողով: Հոռսանք, վոր այս
համագումարից հետո մենք կստանանք տվյալներ, թե
քանի նահանգում և ի՞նչ է արված այդ ուղղությամբ, և
ճիշտ պատասխան կստանանք: Բայց արդեն այն հանդա-
մանքը, վոր ստիպված ենք յեղել անդրադիտություն վե-
րացման արտակարգ հանձնաժողով կազմելու, այդ հան-
գամանքն ապացուցում է, վոր մենք մի տեսակ (ի՞նչպես
ասել՝ վոր մեզմ լինի) կիսավայրենի մարդիկ ենք, վորով-
հետև այն յերկրում, ուր մարդիկ կիսավայրենիներ չեն,
այնտեղ ամոթ կլինեք կազմել անդրադիտության վերաց-
ման արտակարգ հանձնաժողով — այնտեղ անդրադիտու-
թյունը վերացնում են դպրոցներում: Այնտեղ կան տա-
նելի դպրոցներ, և նրանցում սովորեցնում են: Ի՞նչ բանի
յեն սովորեցնում: Առաջին հերթին — զրադիստության: Իսկ
յեթե այդ տարրական խնդիրը չի լուծված, — ծիծաղելի յե
խոսել տնտեսական նոր քաղաքականության մասին:

Այնտեղ ի՞նչ նոր քաղաքականություն կարող է լինել:
Տա աստված, վոր կարողանանք մի կերպ հինը պահել, յե-
թե մենք պետք է արտակարգ միջոցներով վերացնենք ան-
դրադիտությունը: Այդ — անհնալանի յե: Բայց ե՛լ ավելի

անհնալանի յե ասյն, վոր մենք հրաչնեք եմք պարծել ն՝
ապրակալան և՛ ուրիշ բնադավաններում: Այդ բոլոր
հրաչների միջև ամենամեծ հրաչն, իմ կարծիքով, այն
կլինեք, վոր մենք միանգամայն վերացնել ենք անդրադի-
տության վերացման հանձնաժողովը: Յեվ վորպեսզի առաջ
չգան նման նախագծեր (ինչպես յես այտեղ լսեցի) — այդ
հանձնաժողովը լուսժողկոմատից անջատելու մասին: Յեթե
այդ այդպես է, յեթե թափանցում էք դրա խորքը, ապա
համաձայնվեցեք, վոր պետք է ստեղծել արտակարգ հանձ-
նաժողով՝ մի քանի վատ նախագծեր լիկվիդացիա անելու
համար:

Այդ քիչ է. բավական չե՛ անդրադիտությունը վերա-
ցնել, այլև պետք է կազմել խորհրդային տնտեսություն,
իսկ այդ անելու համար՝ միայն գրադիտությամբ շատ
հեռու դնալ չես կարող: Մեզ պետք է կուլտուրայի հսկա-
յական բարձրացում: Անհրաժեշտ է, վոր մարդ կարդալու
և գրելու կարողությունից դործի՝ վրա ոգտվի, անհրաժեշտ
է, վոր նա կարդալու բան ունենա, վոր նա լրագրեր և
պրոպագանդիստական գրքույկներ ունենա, անհրաժեշտ է,
վոր դրանք ուղիղ բաշխվեն և ժողովրդի ձեռքը հասնեն,
ճանապարհին չկորցվեն. այժմ դրանց վոչ ավել քան կեսն
է կարդացվում և դրասենյակներում ինչ վոր բանի վրա
գործածվում, իսկ ժողովրդի ձեռքը գուցե մի քառորդ
մասն էլ չի հասնում: Պետք է սովորել ոգտվել այն քիչ,
ինչ վոր ունենք:

Ահա թե ինչու նոր տնտեսական քաղաքականության
հետևանքով պետք է անդադար առաջ քաշել այն միտքը,
վոր քաղաքական լուսավորությունը պահանջում է կուլ-
տուրայի բարձրացում՝ ինչ գնով էլ լինի: Պետք է աշխա-
տել, վոր կարդալու և գրելու կարողությունը ծառայի
կուլտուրայի բարձրացմանը, վորպեսզի գյուղացին հնարա-
վորություն ստանա կարդալու և գրելու այդ կարողու-
թյունը իր տնտեսության և իր պետության բարեկալման
համար կիրառել»: (Հ. XVIII, մ. 1, էջ 381 — 382):

Լենինն առանձնապես մանրամասնորեն է կանգ առնում
այն դեկրետի վրա, վոր վերաբերում է միասնական դրա-

դարանային ցանց կազմելուն, խորհելով, թե ինչպես պետք է մասսաներին անհրաժեշտ գրքեր մատակարարել:

«1920 թ. նոյեմբերի 3-ին հրատարակվել է ժողովրդական կոմիտեաների Խորհրդի դեկրետը՝ «գրադարանային գործի կենտրոնացման մասին» (հոդ. 439, Որենսդրութ. ժողովածու, 1920 թ., № 87), Ռ. Ս. Խ. Ֆ. Հ. միասնական գրադարանային ցանցի մասին:

Ահա մի քանի փաստական տվյալներ, վոր այս հարցի վերաբերյալ ինձ հաջողվեց ստանալ «Յենտրոպեչատից» (կենտր. մամուլ) ընկ. Մալկինից և ժողովրդական Լուսավորության Մոսկվայի բաժանմունքի գրադարանային սեկցիայից՝ ընկ. Մոդեստովից: Խորհրդային կենտրոնական Ռուսաստանի (առանց Սիբիրի, առանց Հյուսիսային Կովկասի) 38 նահանգներում, 305 գավառներում գրադարանների քանակությունը հետևյալն է յեղել.

Կենտրոնական գրադարաններ	342
Ռայոնական քաղաքային գրադարան	521
Գավառական	4474
Շարժական	1661
Խրճիթ - ընթերցարաններ	14739
Այլ և այլ («գյուղական, մանկական, դանդաղան հիմնարկների, դանդաղան կազմակերպություններ»))	12203

Ընդամենը 33940

Ընկ. Մոդեստովը, իր փորձի հիման վրա, յենթադրում է, վոր այդ գրադարանների 3/4-ը գոյություն ունի փաստորեն, մնացածը — միայն թղթի վրա յեն: Յենտրոպեչատի տվյալներով Մոսկվայի նահանգում կան 1223 գրադարան, ընկ. Մոդեստովի տվյալներով — 1018, վորից 204-ը քաղաքում, 814-ը նահանգում, չհաշված արտֆիլիությունների գրադարանները (յերևի, մոտ 16) և զինվորական գրադարանները (մոտ 125):

Վորջաի դատել կարելի յե նահանգների տվյալների համեմատությունից, այդ թվերի վստահելիությունն այնքան

եւ մեծ չե — կարող է իրականություն մեջ ավելի պակաս դուրս գալ, քան 75%: Որինակ, Վյատկայի նահանգում — 1703 խրճիթ-ընթերցարան, Վլադիմիրի նահանգում — 37, Պետրոգրադի նահ. — 98, Իվանո-Վոդնեսենսկի նահ. — 75 և այլն: «Այլ և այլ գրադարաններ» Պետրոգրադի նահանգում — 36, Վորոնեժի նահ. — 825, Ուֆայի նահ. — 525, Պսկովի նահ. — 31 և այլն:

Ինչպես տեսնում ենք, այդ տվյալները ցույց են տալիս հենց այն, վոր բանվորական և գյուղացիական մասսաների սովորելու ցանկությունը հակադաս է, կրթությունն ստանալու ձգտումը, գրադարաններ հիմնելու ձգտումը ուժեղ է, «ժողովրդական» է՝ բառիս իսկական իմաստով: Բայց ժողովրդի այդ ձգտումը կազմակերպելու, կարգավորելու, ձևակերպելու, այդ ձգտումին ուղիղ բավարարություն տալու կարողությունը մեզ մոտ համարյա բացակայում է: Գրադարանային իրող միասնական ցանց հիմնելու համար դեռ պետք է շատ և համառ ուշխաթել:

Մենք ինչպես ենք բաշխում լրագրերն ու գրքերը: Յենտրոպեչատի տվյալներով, 1920 թ. ընթացքում տարածված են՝ լրագրեր — 401 միլիոն որինակ, գրքեր — 14 միլիոն (11 ամսվա ընթացքում): Ահա տվյալները՝ 3 լրագրի (12192) բաշխման մասին. այս բաշխումը սահմանել է ԼԿՊԿ-ի պարբերական մամուլի սեկցիան (թվերը ցույց են տալիս հաղարական որինակներ):

	«Իվկա-տվա»	«Իվկա-դա»	«Ենդո-տա»
Յենտրոպեչատի գործակալությունը	191	139	193
Ձինվոր. Բյուրոն Դիվիզիայի պրական եղապեղիղիայի համար	50	40	85
Ցեկաթուղային կազմակ. Յենտրոպեչատի յերկաթուղ. բաժ. տղիտպունկտերը	30	25	16
Մոսկվա քաղաքի հիմնարկություններն ու կազմակերպությունները	65	35	8
Մոսկվա քաղաքի զինկոմը	8	7	6
Կոմսոլ. մարդատար գնացքների համար	1	1	1
Փակցներուն և կոմսոլ.	5	3	1
Ընդամենը	350	250	300

Զատիադանց քիչ և հատկացված փակցնելուն, այսինքն՝ ավելի լայն մասսաների համար: Զատիադանց շատ և հատկացված մայրաքաղաքի «Հիմնարկություններին» և նմաններին — պարզ և՛ թալանի և «սովբյուրոներին» (թե դինվորական և թե քաղաքացիական) բյուրոկրատիկ ոգտադործման համար:

Ահա՛ ևս մի քանի թվեր, Յենտրոպեչատի տեղական յենթարտօինների հաշվետվություններէ: Յենտրոպեչատի վորոնեժի դործակալությունը 1920 թվի սեպտեմբերի ընթացքում ստացել և՛ լրագրեր — 12 անգամ (այսինքն՝ սեպտեմբեր ամսի 30 որից 18 որ լրագիր չի ստացել): Ստացված լրագրերը բաշխել են այսպես. «Իգվիատիան» Յենտրոպեչատի դործակալություններին ուղարկվել և — դավառային դործակալութ.՝ 4986 որինակ (4020, 4310)*, ռայոն. դործ.՝ 7216 (5860, 10164). դավառակային դործ.՝ 3370 (3200, 4285). կուսակցական կազմակերպություններին՝ 447 (669, 3880). խորհրդային հիմնարկություններին՝ 1765 (1641, 509): — Նկատեցեք վոր «Պրավդան» խորհրդային հիմնարկություններին բաժին և ընկել համարյա յերեք անգամ ավելի, քան կուսակցական կազմակերպություններին: Այնուհետև — զինկոմի ագիտ. լուսին՝ 5532 (5793, 12332). ագիտպոնկտներին՝ 352 (400, 593). խորհրդ-ընթերցարաններին — զերո: «Բաժանորդներին»՝ 7167 (3080, 764): «Բաժանորդներին», հետևապես, շատ յուղալի յե, այսինքն, փաստորեն, իհարկե՝ «սովբյուրոներին»: Փակցնելուն՝ 460 (508, 500): Ընդամենը 32517 (25104, 37237):

Ուֆայի նահանգը 1920 թ. նոյեմբեր ամսի ընթացքում լրագիր ստացել և 25 որ, այսինքն՝ լրագիր չի ստացել միայն 5 որ: Յես մի քանի թվեր՝ բաշխման ցուցակից. — կուսակցական կազմակերպություններին՝ 113 (1572, 153). խորհրդային հիմնարկություններին՝ 2763 (1296, 1267). զինկոմի ագիտլուսին՝ 687 (470, 6500). դավառակային

* Փակագծի մեջ տեղացած առաջին թիվը վերաբերում և «Պրավդային», յերկրորդ թիվը — «Ենգնոտային»:

դործկոմներին՝ 903 (308, 2511). խորհրդ-ընթերցարաններին՝ 36 (3 — «Պրավդան» ութ որինակ! — 2533). բաժանորդներին — զերո. «դավառային դանադան կազմակերպություններին»՝ 1044 (219, 991): Ընդամենը 5841 (4069, 15429):

Վերջապես, Վլադիմիրի նահանգի Սուգոգոդի դավառի Պուստոչինի դավառակային դործակալության՝ 1920 թ. դեկտեմբերի հաշվետվությունը. — կուսակցական կազմակերպություններին՝ 1 (1,2). խորհրդային հիմնարկություններին՝ 2 (1,3). զինկոմի ագիտլուսին՝ 2 (1,2). դավառակային դործկոմներին՝ 2 (1,3). փոստ-հեռագր. հիմնարկություններին՝ 1 (1,1). Ուրոչեմսկու դործար. կոմիտեյին՝ 1 (1,2). ռայոն. սոցապին՝ 1 (0,3): Ընդամենը 10 (6,16):

Ի՞նչ յեղրակացության ենք հանդում մեջ ընդ մեջ բերված այս տվյալներից: Յեղրակացություն, իմ կարծիքով, այն և, վոր մեր կուսակցական ծրագիրը արտահայտել և հետևյալ խոսքերով. — «Ներկա մոմենտում... արվում են միայն առաջին քայլերը կապիտալիզմից դեպի կոմունիզմ անցնելու»:

Կապիտալիզմը լրագրերը դաբձրել եր կապիտալիստական ձեռնարկություն, հարուստների համար չահի, ինքորմացիայի և զվարճության դործիք, աշխատավոր մասսաներին խարելու և հիմարացնելու դործիք: Մենք կտրեցինք չահի և խաբեյության դործիքը: Մենք լրագրերը սկսեցինք դարձնել մասսաներին լուսավորելու դործիք, մի դործիք, վոր սովորեցնում և նրանց՝ աքանց կալվածատերերի ու կապիտալիստների ապրելու և իրենց տնտեսությունը առանց նրանց հիմնելու: Բայց մենք դեռ նոր, նոր ենք սկսել այդ անել: Ավելի քան յերեք տարվա ընթացքում քիչ բան ենք արել: Մինչդեռ շատ բան պետք և անել, դեռ շատ յերկար ճանապարհ պետք և կտրել: Վորքան կարելի յե քիչ՝ քաղաքական ճոճոց, վորքան կարելի յե քիչ՝ ընդհանուր դատողություններ և աքսորակտ լոզունգներ, վորոնցով հըրճվում են անխորձ և իրենց ինդիքները չըմբռնող կոմունիստները, վարքան կարելի յե՝ շատ արտադրական պրոպա-

դանդ, իսկ առաջել ևս՝ պրակտիկ փորձի հմուտ, մասսայի զարգացման մակարդակին հարմարեցրած հաշվառում:

Լրտղերների բաշխումը կատարելով (դրքերի վերաբերյալ յես տվյալներ չունենա, այնտեղ դործն յերևի ավելի վատ է դրված) մենք բաժանորդագրութունը վերացրինք: Այդ՝ դեպի առաջ կատարված մի քայլ էր — կապիտալիզմից դեպի կոմունիզմ: Բայց կապիտալիզմը միանգամից սպանել չի կարելի: Նա վերածնվում է «սովբյուրոնների», խորհրդային բյուրոկրատիայի կերպարանքով. այդ բյուրոկրատիան դառնալով պատրվակներով թալանում է լրագրերը: Հաշվել, թե նա վո՞րքան է թալանում, — չի կարելի, բայց, ըստ յե-րևույթին, շատ: Պետք է համառորեն և սխտեմաբար աչ-խատել բյուրոկրատիայի «թևերին խփել», թույլ չտալ վոր նա թալանի լրագրերն ու դրքերը, պակասեցնել նրա բա-ժինը, անչեղ պակասեցնել հենց իրենց՝ «սովբյուրոնների» թիվը: Դժբախտաբար, մեր կուլտուրայի տվյալ մակարդա-կով մենք անկարող ենք այդ թիվը միանգամից պակասե-ցնել տառն, հարյուր անգամ: Այդպիսի խոստում անելը չարաոտանութուն կլիներ, բայց շարունակ և անչեղ կրճա-տել — այդ մենք կարող ենք և պետք է անենք: Այն կոմու-նիստը, վորն այդ չի անում, միայն խոսքով է կոմունիստ:

Պետք է աշխատել անպայման հասնել այն վիճակին, վոր լրագրերն ու դրքերը, ըստ կանոնի, ձրի բաշխվեն միայն զրադարաններ և ընթերցարանների ցանցին, վորը պետք է ուղիղ սպասավորի ամբողջ յերկրին, բանվորների, զինվոր-ների, դյուղացիների ամբողջ մասսային: Այն ժամանակ ժողովուրդը հարյուր անգամ ավելի ուժեղին, ավելի արագ, ավելի հաջողությամբ կձգտի դեպի դրագրիտութուն, դե-պի լույս, դեպի դիտութուն: Այն ժամանակ լուսավորու-թյան դործը առաջ կընթանա հսկայական քայլերով:

Վորպես պարզ որինակ, մի փոքրիկ հաշիվ. — ամբողջ Ռուսաստանի համար՝ 350 հազար «Ժզվեստիա» և 250 հազար «Պրավդա»: Մենք աղքատ ենք: Թույլ չկա: Բանվորները քաղց և ցուրտ են ապրում, մերկ են, բոկոտն: Մեքենա-ները մաշված են: Շենքերը փլվում են: Յենթադրենք, վոր

ամբողջ յերկրի համար — 10.000-ից ավելի դավառակների համար — ունենք 50.000 զրադարան և ընթերցարան, բայց վոչ թղթի վրա, այլ փաստորեն: Յուրաքանչյուր դավա-ռակին — վոչ պակաս յերեքական որինակ, և անպայման մեկական որինակ — յուրաքանչյուր դործարանին կամ ֆաբրիկային, յուրաքանչյուր զինվորական մասին: Յեն-թադրենք, վոր մենք սովորել ենք ուղիղ բաշխել յուրաքան-չյուր զրադարանին կամ ընթերցարանին յերեքական որի-նակ լրագիր, դրանցից յերկուսը, ընդունենք, հատկացված է «փակցնելուն» (յենթադրելով, վոր մենք արել ենք չորրորդ քայլը՝ կապիտալիզմից դեպի կոմունիզմ, յես ընդունում եմ, յես ինձ թույլ եմ տալիս ընդունելու, վոր բարբարո-սաբար «փակցնելու» փոխարեն, վոր փչացնում է լրագիրը, մենք այն կպցնում ենք փայտե մեխերով — յերկաթե մե-խեր չկան, մենք մեր «չորրորդ քայլի» ժամանակ ևս յեր-կաթի պակասութուն կզգանք) — հարթ տախտակի վրա, վորպեսզի հարմար լինի կարգալ և վորպեսզի լրագիրը պահպանվի): Յե՞վ այսպես, 2-ական որինակը հատկաց-վում է 50.000 զրադարաններին և ընթերցարաններին՝ «փակ-ցնելու» համար, 1-ական որինակը — պահեստի համար: Այնուհետև յենթադրենք, վոր մենք սովորել ենք լրագիրը «սովբյուրոններին» չափավոր քանակությամբ իզուր տեղը տալ, ասենք, վոչ ավելի քան մի քանի հազար որինակ ամբողջ Խորհրդային Հանրապետության յերես առած «բարձրաստի-ճան պաշտոնյաներին»:

Այսքան համարձակ հատկացումը — 160 կամ 175 հազար որինակն ամբողջ յերկրին կառավանացնի հինգ անգամ ավելի լավ, քան այժմ է: Բույրն ել հնարավորութուն կունենան լրագրեր կարդալու (յեթե լավ կազմակերպենք «չըջիկ — զրադարանների» դործը, վորոնք այս որերս «Պրավդայում», իմ կարծիքով, այնքան հաջող կերպով պաշտպանեց ընկեր Ֆ. Դորբերը): Յերկու լրագրերից 350 հազար որինակ: Իսկ ներկայումս — 600 հազար, վո-րոնք թալանվում են «սովբյուրոնների» կողմից, իզուր տեղը կորչում, ծխվում և այլն՝ լոկ կապիտալիստական սովո-

որութեան հետեանցով: Կարող եր տնտեսել 250 հազար
որինակ: Ուրիշ խոսքով, մենք, չնայած մեր աղքատ վիճա-
կին, կանտեսելինք յերկու ամենորոյա թերթ՝ յուրաքան-
չյուրը 125 հազար որինակ: Յեւ այդ լրագրում կարելի
էլիներ ժողովրդին ամեն որ տալ գրական լուրջ և արժեքավոր
նյութ, լայնաշունչ և կլասիկ բելետրիստիկա, հանրակրթա-
կան դասադրքեր, գյուղատնտեսութեան, արդյունադործու-
թեան վերաբերյալ դասադրքեր: Յեթե Ֆրանսական բուր-
ժուան փող չահելու նպատակով դեռ պատերազմից առաջ
սովորել և հրատարակել ժողովրդի համար վեպեր՝ յուրա-
քանչյուրը վոչ թե 3½ Ֆրանկ արժողութեամբ, աղայական
գրքի տեսքով, այլ յուրաքանչյուրը 10 ցանտիմ արժողու-
թեամբ (այսինքն՝ 35 անգամ ասեան, 4 կոպեկ՝ մինչպա-
տերազմյան կուրսով)՝ պրոլետարական լրագրի տեսքով, —
ապա ինչու մենք — կապիտալիզմից կքմունիզմին անցնելու
յերկրորդ քայլի վրա — չսովորենք այդպես վարվել: Ինչո՞ւ
մենք չպետք է սովորենք, այդ կերպ վարվելով, հասնել այն
վիճակին, վորպեսզի մի տարվա ընթացքում, — նույնիսկ
ներկա աղքատ դրութեամբ — ժողովրդին՝ 50.000 գրադարան
ընթերցարաններից յուրաքանչյուրին տալ յերկուական որի-
նակ լրագիր, բոլոր անհրաժեշտ դասադրքերը և համաշ-
խարհային գրականութեան, ժամանակակից դիտութեան,
ժամանակակից տեխնիկայի բոլոր անհրաժեշտ կլասիկները:
Սովորենք»: (Հ. XVIII, մ. I, էջ 77):

Անասարանքի մեջ, մանր հոգսերով ծանրաբեռնված,
մենք հաճախ բավականաչափ չենք ոգտվել Լենինի ցուց-
մունքներից, չառ բան չենք արել նրանից, ինչ վոր կարող
էինք անել:

Այժմ նրա սպասարաններն օտանձնապես պայծառ են հան-
դես դալիս. պետք է լրացնել, անել այն, ինչ չի արված,
պետք է ուղղել դիժը, դարդացնել անհրաժեշտ յեռանդ:

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆ. ԿԵՆՏՐ. ԴՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Պ Ա Շ Ա Ն Ջ Ե Ց Ե Ք

ԼԵՆԻՆ — Դյուրացիության մասին	160 էջ, 40 կոպ.
» Պատերազմի մասին	376 էջ, 95 »
» Ինչ անել	224 էջ, 65 »
» Մի քայլ առաջ, յեկու քայլ հետ	272 էջ, 70 »
ԼԵՆԻՆԻ պատգամներ յերեսասարգության	15 »
» պատգամներ ժողով. լուսավորութ. մասին	20 »
ՍՏԱԼԻՆ — Ազգային հարց	1 ս. 60 »
» Դյուրացիական հարց	50 »
» Մեծ բեկման տարին	5 »
» Ագրարային հարցի շուրջ	8 »
ՍՏՈԼՅՈՒՆՈՎ — Դիալեկտիկական մատերիալիզմը յեվ մեխա- նիստները	1 ս. 25 »
«ՄՏԱԼԻՆ» — (հոգվածների ժող. ծննդ. 50-ամյակի առթիվ) 50	»
«Պրոլետարական գրականության նորոգում» (ժող.)	1 ս. 20 »
Քաղաքական բառարան (II հրատ.)	800 էջ, 2 ս. —

ԼԵՆԻՆ — Հունվարի 9-ը	10 կոպ.
ՆԵՂԵ — 1905 թվը	50 »
1905 թվի հեղափոխությունը (ժողովածու)	90 »
ՅՈՒՆԵՐԱՎՈՒԹՅՈՒՆ — Մեր առաջին բանվ. գլուղ. հեղափոխությունը 1905 թ.	70 »
ՆԵՂԵ — 1905 — 7 թ.թ. դյուրացիական պատերազմը (հեղափոխությունը)	60 »
ԿԱՐԿԵՅԱՆ — Անգլոպոլսաք 1905 թվին	40 »
ԲՐՎԱԼՈՎ — Պատյունիների վրա (գեղարվ.)	20 »

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

Տիմիրյազով — Բալսի կյանք	20 մամուլ
» Դարվիցը յեվ նրա ուսմունքը	18 »
Լուկին — Արեւմտ. Յեյրոպայի նորագույն պատմությունը 45	»

Կենտ. պահեստում կա նախկին կոլխոզային տարածման վերա-
բերյալ գրականություն.

ՊԱՀԱՆՉՅՑՆԵՐ մեր գրացուցակը, վոր ուղարկվում է մեր
Դիմել՝ Москва, Никольская, 10. Центриздат.

ՊԱՀԱՆՁԵՑԵՔ
ՄԵՐ ԳՐԱՅՈՒՑԱԿԸ, ՎՈՐ
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ՋՐԻ.
ԴԻՄԵՆ, Москва, Никольская, 10.
ЦЕНТРИЗДАТ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0228030

10 ԿՈՊ.

Цена 10 коп.
Л. М. 2.



ЛЕНИН

О народном образовании
Сост. Н. К. Крупская

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10

44.568

37
4-98